



Food and Agriculture
Organization of the
United Nations



World Health
Organization



Թունաբիմիկատների կառավարման միջազգային վարքագծի կանոնագիրք

Ուղեցույց առավել վտանգավոր թունաբիմիկատների մասին



Մարտ 2016թ.

Թունաբիմիկատների կառավարման միջազգային վարքագծի կանոնագիրք

Ուղեցույց առավել վտանգավոր
թունաբիմիկատների մասին

Քիմիական նյութերի արդյունավետ կառավարման միջգերատեսչական ծրագիրը (ՔՆԱԿՄԾ) ստեղծվել է 1995թ.-ին՝ ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի և զարգացման խորհրդատվորդի ներկայացրած առաջարկությունների հիման վրա՝ քիմիական անվտանգության ոլորտում համագործակցության ամրապնդման և միջազգային համակարգման ընդլայնման նպատակով: Մասնակից կազմակերպություններն են ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը (ՊԳԿ), Աշխատանքի միջազգային կազմակերպությունը (ԱՄԿ), Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (ՏՀԶԿ), ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագիրը (ՄԱՇՄԾ), ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպությունը (ՄԱԱԶԿ), ՄԱԿ-ի Վերապատրաստման և հետազոտությունների ինստիտուտը (ՄԱՎՅԻ) և Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ): Համաշխարհային բանկը և ՄԱԿ-ի Չարգացման ծրագիրը (ՄԱՉԾ) հանդես են գալիս դիտորդի դերում: Քիմիական նյութերի արդյունավետ կառավարման միջգերատեսչական ծրագրի նպատակն է խթանել մասնակից կազմակերպությունների կողմից համատեղ կամ առանձին վարվող քաղաքականությունների և գործողությունների համակարգումը՝ մարդու առողջության և շրջակա միջավայրի հետ կապված քիմիական նյութերի արդյունավետ կառավարմանը հասնելու համար:

Սույն հրատարակությունը մշակվել է ՔՆԱԿՄԾ-ի համատեքստում: Բովանդակությունը պարտադիր չէ, որ արտացոլի ՔՆԱԿՄԾ-ի մասնակից առանձին կազմակերպությունների տեսակետները կամ հռչակած քաղաքականությունները:

Սույն տեղեկատվական նյութում օգտագործված անվանումները և նյութի ներկայացումը չեն ենթադրում Միավորված ազգերի կազմակերպության Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) կամ Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) անունից որևէ կարծիքի արտահայտում, որը կվերաբերեր որևէ երկրի, քաղաքի կամ տարածքի կամ դրա իշխանությունների իրավական կամ զարգացման կարգավիճակին, կամ որը կվերաբերեր սահմանների սահմանագծմանը կամ որոշարկմանը: Քարտեզների վրա կետավոր գծերն արտացոլում են մոտավոր սահմանային գծերը, որոնց վերաբերյալ, հնարավոր է, որ դեռևս չլինի լիարժեք համաձայնություն: Կոնկրետ ընկերությունների կամ արտադրողների արտադրանքների հիշատակումը, անկախ դրանց արտոնագրված լինելու կամ չլինելու հանգամանքից, չի ենթադրում այն, որ դրանք ՊԳԿ-ի կամ ԱՀԿ-ի կողմից արժանացել են հավանության կամ խորհուրդ են տրվում՝ գերադասվելով նմանատիպ բնույթի այլ ապրանքներից, որոնք չեն հիշատակվել սույն հրատարակությունում: Սխալներն ու բացթողումները բացառված են, գույքային արտադրանքների անվանումները տարբերվում են մեծատառ սկզբնատառերով: ՊԳԿ-ն և ԱՀԿ-ն ձեռնարկել են բոլոր ողջամիտ նախազգուշական միջոցները՝ ստուգելու համար սույն հրատարակությունում պարունակվող տեղեկատվությունը: Այնուամենայնիվ, հրատարակված նյութը տարածվում է առանց որևէ երաշխիքի՝ արտահայտված կամ ենթադրյալ: Նյութի մեկնաբանման և օգտագործման համար պատասխանատվությունն ընկնում է ընթերցողի վրա: ՊԳԿ-ն և ԱՀԿ-ն ոչ մի պարագայում պատասխանատվություն չեն կրում դրա օգտագործման արդյունքում առաջացած վնասների համար: Սույն տեղեկատվական նյութում արտահայտված տեսակետները պատկանում են հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն ՊԳԿ-ի կամ ԱՀԿ-ի տեսակետները:

ISBN 978-92-5-109187-6

© ՊԳԿ և ԱՀԿ, 2016թ.

ՊԳԿ-ն և ԱՀԿ-ն խրախուսում են սույն տեղեկատվական նյութում ներկայացված բովանդակության օգտագործումը, բազմացումը և տարածումը: Բացառությամբ այն դեպքերի, երբ որևէ այլ ցուցում է տրվել, սույն նյութը կարելի է պատճենահանել, ներբեռնել և տպագրել անհատական ուսումնասիրության, հետազոտության և ուսուցման նպատակներով՝ պայմանով, որ ՊԳԿ-ն և ԱՀԿ-ն պատշաճ ձևով ճանաչվեն և նշվեն որպես սույն նյութի աղբյուր և հեղինակային իրավունքի սեփականատեր, և որ որևէ կերպ չի ենթադրվում, որ ՊԳԿ-ն և ԱՀԿ-ն հավանություն են տալիս օգտագործողների տեսակետներին, ապրանքներին կամ ծառայություններին:

Տեքստի թարգմանության և ադապտացման իրավունքների, վերավաճառքի և առևտրային այլ նպատակներով օգտագործման իրավունքների համար բոլոր դիմումները պետք է ուղղվեն հետևյալ կայքէջի միջոցով՝ www.fao.org/contact-us/licence-request կամ ուղարկվեն էլեկտրոնային փոստի հետևյալ հասցեով՝ copyright@fao.org: ՊԳԿ-ի տեղեկատվական նյութերը հասանելի են ՊԳԿ-ի վեբկայքում (www.fao.org/publications) և կարելի է ձեռք բերել՝ դիմելով publication-sales@fao.org հասցեով:

Բովանդակություն

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	1
ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ	2
1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
1.1 Ընդհանուր տեղեկություններ.....	4
1.2 Առավել վտանգավոր թունաքիմիկատներին վերաբերող հարցեր.....	6
1.3 Սույն փաստաթղթի նպատակը	8
1.4 Կիրառման ոլորտը.....	8
1.5 Տեղեկատու աղբյուրներ.....	5
2. ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄ	9
2.1 Սահմանում.....	9
2.2 Չափանիշներ.....	9
2.3 Գործածության մեջ գտնվող առավել վտանգավոր թունաքիմիկատների նույնականացում.....	10
3. ԳՆԱՀԱՏՈՒՄ	11
3.1 Ռիսկի գնահատում.....	11
3.2 Կարիքների գնահատում	15
4. ՄԵՂՍՈՒՄ	17
4.1 Մեղմման տարբերակներ.....	17
4.2 Մեղմման տարբերակի ընտրություն.....	20
5. ԾՐԱԳՐՈՒՄ	22
5.1 Գործողությունների ծրագրի մշակում.....	22
5.2 Հաղորդակցություն և շահագրգիռ կողմերի ներգրավվածություն.....	22
6. ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ	24
6.1 Գրանցում.....	24
6.2 Կիրարկում	24
6.3 Ուսուցում	24
6.4 Հսկողություն.....	25
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	26
Նյութեր.....	26
Հիմնական տեղեկատվական աղբյուրները.....	28
ՀԱՎԵԼՎԱԾ I. ԱՎԹ –ի չափանիշներին վերաբերող լրացուցիչ մանրամասներ և տեղեկատվական աղբյուրներ.....	29
ՀԱՎԵԼՎԱԾ II. ՊԳԿ –ի թունաքիմիկատների գրանցման գործիքակազմը.....	32

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ան	ազդող նյութ
ԱՅԿ	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն
ԱՄԿ	Աշխատանքի միջազգային կազմակերպություն
ԱՄՆ ՇՄՊԳ	ԱՄՆ Շրջակա միջավայրի պահպանության գործակալություն
ԱՊՄ	Անհատական պաշտպանության միջոցներ
ԱՎԹ-ներ	Առավել վտանգավոր թունաքիմիկատներ
ԳՆՀ	Քիմիական նյութերի դասակարգման և պիտակավորման գլոբալ ներդաշնակեցման համակարգ
ԵԲՄԵ	Եկամուտների բարձր մակարդակով երկրներ (նախկինում զարգացած երկրները)
ԵՑՄՄՈՒԵ	Եկամուտների ցածր և միջին մակարդակ ունեցող երկրներ
ԵՑՄՈՒԵ	Եկամուտների ցածր մակարդակ ունեցող երկրներ (նախկինում զարգացող երկրները)
ԹԿՀՀՀ	ՊԳԿ-ի և ԱՀԿ-ի թունաքիմիկատների կառավարման հարցերով համատեղ հանդիպում
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՓԴԻՊ	Հիվանդություններ փոխանցողների դեմ ինտեգրված պայքար
ՄԱՇՄԾ	Միավորված ազգերի Շրջակա միջավայրի ծրագիր
ՊԳԿ	Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության
ՎԴԻՊ	Վնասատուների դեմ ինտեգրված պայքար
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՔՆԵԳ	Քիմիական նյութերի եվրոպական գործակալություն
ՔՀՍԳ	Քաղցկեղի հետազոտման միջազգային գործակալություն
ՔՆՄԿՈՄ	Քիմիական նյութերի միջազգային կառավարման ռազմավարական մոտեցում

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Ազդող նյութ (ակտիվ բաղադրիչ) է կոչվում արտադրանքի այն բաղադրիչը, որն ապահովում է թունաքիմիկատի ազդեցության արդյունավետությունը:

Արգելված թունաքիմիկատ է կոչվում այն թունաքիմիկատը, որի բոլոր տեսակի օգտագործումները, մարդու առողջության կամ շրջակա միջավայրի պահպանության նկատառումներով, արգելված են վերջնական կարգավորող որոշմամբ: Այս հասկացությունը վերաբերում է այն թունաքիմիկատին, որը սկզբնական օգտագործման համար չի հաստատվել կամ արդյունաբերության կողմից հանվել է՝ կամ ներքին շուկայից կամ ներքին հաստատման գործընթացի շրջանակում հետագա քննարկումից, քանի որ առկա են եղել համոզիչ ապացույցներ առ այն, որ այդ միջոցները ձեռնարկվել են՝ մարդկանց առողջության կամ շրջակա միջավայրի պահպանության նպատակով:

Օժանդակ նյութ (համագործիչ)՝ պատրաստի արտադրանքի ոչ ակտիվ բաղադրիչ:

Պատրաստուկային ձևը տարբեր բաղադրիչների համադրությունն է, որոնք նախատեսված են արտադրանքը դարձնել պահանջվող նպատակի և կիրառելի եղանակի համար օգտակար և արդյունավետ:

Վտանգավորություն՝ որևէ նյութին, ազդանյութին /ռեագենտ/ կամ իրավիճակին բնորոշ հատկություն, որը կարող է առաջացնել անցանկալի հետևանքներ (օրինակ, այնպիսի հատկություններ, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ մարդու առողջության, շրջակա միջավայրի կամ ունեցվածքի վրա կամ վնասել դրանք):

Առավել վտանգավոր թունաքիմիկատներ են կոչվում այն թունաքիմիկատները, որոնք, համաձայն միջազգային ընդունված դասակարգման համակարգերի, ինչպիսիք են, օրինակ, ԱՅԿ-ի համակարգը կամ Զիմիական նյութերի դասակարգման և պիտակավորման գլոբալ ներդաշնակեցման համակարգը (ԳՆՅ), կամ համաձայն համապատասխան միջազգային պարտադիր համաձայնագրերի կամ կոնվենցիաների ցուցակների, համարվում են առողջության և շրջակա միջավայրի համար սուր կամ քրոնիկական ազդեցության հատկապես բարձր մակարդակներ ներկայացնող նյութեր: Բացի այդ, թունաքիմիկատները, որոնք տվյալ երկրում օգտագործման պայմաններում ծանր կամ անդառնալի վնաս են պատճառում առողջությանը կամ շրջակա միջավայրին, կարող են դիտարկվել և համարվել որպես առավել վտանգավոր թունաքիմիկատներ:

Վնասատուների դեմ ինտեգրված (համալիր) պայքարը (ՎԴԻՊ) վնասատուների դեմ պայքարի բոլոր հնարավոր մեթոդների մանրակրկիտ ուսումնասիրությունն է և համապատասխան միջոցառումների հետևողական ինտեգրումը, որը ճնշում է վնասատուների պոպուլյացիաների զարգացումը և թունաքիմիկատներն ու այլ միջամտությունները պահում է տնտեսապես հիմնավորված մակարդակների վրա և կրճատում կամ նվազագույնի է հասցնում մարդու առողջության և շրջակա միջավայրի համար ռիսկերը: ՎԴԻՊ-ը կարևորում է առողջ բերքի աճեցումը՝ ագրոէկոհամակարգերի հնարավորինս նվազ քայքայմամբ և խրախուսում է վնասատուների դեմ պայքարի բնական մեթոդները:

Հիվանդություններ փոխանցողների դեմ ինտեգրված պայքար (ՀՓԴԻՊ)՝ հիմնավորված որոշումների կայացման գործընթաց՝ հիվանդությունների փոխանցողների դեմ պայքարի ռեսուրսների օպտիմալ օգտագործման համար: Այն նպատակ ունի բարելավել արդյունավետությունը, ծախսարդյունավետությունը, Էկոլոգիական անվտանգությունը և

հիվանդություններ փոխանցողների դեմ պայքարի միջոցների կայունությունը:

Թունաքիմիկատ՝ քիմիական կամ կենսաբանական բաղադրիչներից կազմված ցանկացած նյութ կամ խառնուրդ, որը նախատեսված է վնասատուներին վանելու, ոչնչացնելու կամ վերահսկելու կամ բույսի աճը կարգավորելու համար:

Թունաքիմիկատների կառավարում՝ թունաքիմիկատների կենսագործունեության բոլոր կողմերի նկատմամբ նորմատիվ իրավական և տեխնիկական վերահսկում, այդ թվում թունաքիմիկատների և դրանց տարաների արտադրության (արտադրության և պատրաստուկային ձևի մշակման), թույլտվության, ներմուծման, բաշխման, վաճառքի, մատակարարման, փոխադրման, պահպանման, տնօրինման, կիրառման և հեռացման նկատմամբ՝ անվտանգության և արդյունավետության ապահովման, մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը նվազագույնի հասցնելու համար:

Ռիսկը մարդու առողջության կամ շրջակա միջավայրի վրա թունաքիմիկատի բացասական ազդեցության հավանականությունն է և ծանրությունը՝ կախված թունաքիմիկատի վտանգավորությունից, ազդեցության հավանականությունից և աստիճանից:

Խիստ սահմանափակ օգտագործման թունաքիմիկատն այն թունաքիմիկատն է, որի բոլոր տեսակի օգտագործումները, բացառությամբ որոշ թույլատրված օգտագործումների, վերջնական կարգավորող որոշմամբ գործնականում արգելված են՝ մարդու առողջության և շրջակա միջավայրի պահպանության նպատակով: Այս հասկացությունը վերաբերում է նաև այն թունաքիմիկատին, որի օգտագործումն արդյունաբերության կողմից չի հաստատվել կամ հանվել է տեղական շուկայից կամ ներքին հաստատման գործընթացի շրջանակներում հետագա քննարկումներից, եթե կան հստակ ապացույցներ այն մասին, որ նմանօրինակ գործողությունները ձեռնարկվել են մարդու առողջության և շրջակա միջավայրի պահպանության նպատակով:

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1 Ընդհանուր տեղեկություններ

Բոլորին հասկանալի է, որ որոշ թունաքիմիկատներ այլ թունաքիմիկատների համեմատ ավելի վտանգավոր են: Այս փաստի ընդունումն արտացոլված է Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱԶԿ) «Թունաքիմիկատների դասակարգումն ըստ վտանգավորության աստիճանի» փաստաթղթում, որն առաջին անգամ հրատարակվել է 1975 թ.-ին: Փաստաթղթում թունաքիմիկատները դասվում են վտանգավորության հինգ դասերից որևէ մեկին՝ ըստ իրենց սուր թունունակության: 2002թ.-ին ներդրվեց «Զիմիական կյուլթերի դասակարգման և պիտակավորման գլոբալ ներդաշնակեցման համակարգ»-ը (ԳՆՀ), որը սուր թունունակությունից բացի, ապահովում է քիմիական կյուլթերի դասակարգումն՝ ըստ քրոնիկական հիվանդությունների և շրջակա միջավայրի համար վտանգների առաջացման հատկության:

Առողջապահական և բնապահպանական վտանգների վերաբերյալ միջազգային հանրության խորը մտահոգությունները հանգեցրեցին «Կայուն օրգանական ադոտոտիչների մասին» Ստոկհոլմի և «Միջազգային առևտրում առանձին վտանգավոր քիմիական կյուլթերի և պեստիցիդների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի կիրառման մասին» Ռոտերդամի կոնվենցիաների ստեղծմանը: Ստոկհոլմյան կոնվենցիայով նախատեսվում է վերջինիս հավելված Ա-ում թվարկված կայուն թունաքիմիկատներից և այլ քիմիական կյուլթերից աստիճանական հրաժարում: Ռոտերդամի կոնվենցիան խթանում է որոշակի վտանգավոր քիմիական կյուլթերի միջազգային առևտրում մարդու առողջության և շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված համատեղ պատասխանատվությունը և համագործակցության ջանքերը: Այն ոլորացնում է երկրների կողմից ընդունված վերջնական կարգավորող գործողությունների և ծայրահեղ վտանգավոր թունաքիմիկատների պատրաստուկային ձևերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակումը, որոնք, համաձայն հաղորդումների, եկամուտների ցածր կամ միջին մակարդակ ունեցող երկրներում օգտագործման պայմաններում առաջացնում են խնդիրներ:

2006թ.-ին ՊԳԿ-ն հաստատեց ՊԳԿ-ի մասնակցությունը «Զիմիական կյուլթերի միջազգային կառավարման ռազմավարական մոտեցում» (ԶՆՄԿՌՄ) գործընթացին և նշեց, որ «Թունաքիմիկատների բաշխման և օգտագործման վերաբերյալ միջազգային վարքագծի կանոնագիրքը»¹ պետք է համարել ԶՆՄԿՌՄ գործընթացի կարևոր բաղադրիչը: Խորհուրդն առաջարկեց, որպեսզի ՊԳԿ-ի գործունեությունը ներառի թունաքիմիկատների ռիսկերի կրճատումը, այդ թվում՝ առավել վտանգավոր թունաքիմիկատների (ԱՎԹ-ներ)² աստիճանական արգելումը: Այս առաջարկը հանգեցրեց թունաքիմիկատների կառավարման հարցերով ՊԳԿ/ԱԶԿ համատեղ հանդիպման (ԹԿՀՀՀ)³ կողմից ԱՎԹ-ների սահմանման չափանիշների ձևակերպմանը, ինչպես նաև «Թունաքիմիկատների կառավարման միջազգային վարքագծի կանոնագրքում» (այսուհետև՝ վարքագծի կանոնագիրք) ԱՎԹ-ների սահմանմանը և հատուկ հղումներին՝ 2013 թվականին իրականացված վերանայման ժամանակ: Չափանիշներն ու սահմանումը ընդգրկում են թունաքիմիկատների ավելի լայն շրջանակ, քան կոնվենցիաներում նշվածներն են: Հետագայում ԱՎԹ-ները դարձան հատուկ կիզակետային ոլորտ ՊԳԿ-ի Վնասատուների և թունաքիմիկատների կառավարման հարցերով խմբի աշխատանքային ծրագրում:

2015թ.-ին ԶՆՄԿՌՄ - ի Զիմիական կյուլթերի կառավարման միջազգային կոնֆերանսն ընդունեց բանաձև, որը ԱՎԹ-ները ճանաչեց որպես մտահոգություն առաջացնող խնդիր և կոչ արեց դիմել համաձայնեցված գործողությունների՝ ԱՎԹ-ների խնդրի լուծման համար, ընդգծելով ագրո-էկոլոգիայի վրա հիմնված այլընտրանքների խթանումը և ռիսկերի գնահատման և կառավարման համար ազգային կարգավորող կարողությունների հզորացումը⁴: Շահագրգիռ կողմերին առաջարկվեց համատեղ ջանքեր գործադրել և հետևողականության ապահովման նպատակով առաջնորդվել ԱՎԹ-ների այն սահմանմամբ, որը ներկայացված է վարքագծի կանոնագրքում և սույն ուղեցույցում:

1. Վերնագիրը փոխվել է «Թունաքիմիկատների կառավարման վերաբերյալ վարքագծի կանոնագրքի»՝ 2013թ.-ին իրականացված վերանայման ժամանակ: [ՊԳԿ/ԱԶԿ 2014թ.]
2. ՊԳԿ-ի Խորհրդի 131-րդ նիստի զեկույց, Հոմ., 20-25 նոյեմբերի 2006թ. (Report of the Council of the FAO, Hundred and Thirty-first Session, Rome, 20-25 November 2006)
3. ՊԳԿ / ԱԶԿ 2-րդ համատեղ հանդիպման զեկույցը թունաքիմիկատների կառավարման և ՊԳԿ-ի փորձագետների խորհրդի 4-րդ նիստի զեկույցը թունաքիմիկատների կառավարման վերաբերյալ, ժնև, 6-8 հոկտեմբերի 2008թ. (Report of the 2nd FAO/WHO Joint Meeting on Pesticide Management and 4th Session of the FAO Panel of Experts on Pesticide Management, Geneva, 6-8 October 2008)
4. ԶՆՄԿՌՄ / ԶՆԿՄԿ. 4 / 15 - Հավելված I. Առավել վտանգավոր թունաքիմիկատների վերաբերյալ բանաձև (IV/3) ((SAICM/ICCM.4/15 - Annex I - Resolution on highly hazardous pesticides (IV/3)).

Ներդիր 1. ՊԳԿ / ԱՅԿ Թունաքիմիկատների կառավարման միջազգային վարքագծի կանոնագրքում առավել վտանգավոր թունաքիմիկատներին առնչվող հոդվածներ

3.6 Թունաքիմիկատներից պետք է խուսափել, եթե դրանց հետ աշխատանքի և կիրառության համար պահանջվում են այնպիսի անհատական պաշտպանության միջոցներ, որոնք հարմարավետ չեն, թանկ են կամ անմատչելի, հատկապես՝ տաք կլիմայական պայմաններում փոքր ծավալով օգտագործողների և գյուղատնտեսական աշխատողների պարագայում:

5.1.6 Կառավարությունները պետք է օգտագործեն բոլոր հնարավոր միջոցները՝ թունաքիմիկատների և թունաքիմիկատներով թունավորման դեպքերի առողջապահական հետևանքների վերաբերյալ հուսալի տվյալների հավաքագրման և վիճակագրության վարման համար՝ օգտագործելով համաձայնեցված մեխանիզմներ, եթե առկա են, և, անհրաժեշտության դեպքում, համապատասխան լիազորված ազգային մարմիններ կայացնել առավել վտանգավոր թունաքիմիկատներով թունավորման դեպքերի մասին Ռոտերդամի կոնվենցիայի շրջանակում մշակված հաշվետվության ձևերը (SHPF): Հավաքագրված տեղեկատվության ճշգրտության ապահովման համար պատշաճորեն վերապատրաստված աշխատակազմի և համապատասխան ռեսուրսների առկայությունն անհրաժեշտություն է:

6.1.1 Կառավարությունները պետք է ներդնեն անհրաժեշտ քաղաքականություն և օրենսդրություն՝ թունաքիմիկատների կարգավորման, դրանց կյանքի ցիկլի ընթացքում մարքեթինգի և օգտագործման համար և նախատեսել դրանց արդյունավետ համակարգում և կիրարկում, ներառյալ համապատասխան կրթական, խորհրդատվական, քարոզչական և առողջապահական ծառայությունների ստեղծումը՝ որպես հիմք օգտագործելով ՊԳԿ-ի և ԱՅԿ-ի ուղեցույցները, և, անհրաժեշտության դեպքում, համապատասխան իրավական պարտադիր փաստաթղթերի դրույթները: Ընդ որում, կառավարությունները պետք է հաշվի առնեն այնպիսի գործոններ, ինչպիսիք են տեղական կարիքները, սոցիալական և տնտեսական պայմանները, գրագիտության մակարդակը, կլիմայական պայմանները, թունաքիմիկատների համապատասխան օգտագործման և անհատական պաշտպանության միջոցների առկայությունը և մատչելիությունը:

7.5 Առավել վտանգավոր թունաքիմիկատների ներմուծման, բաշխման, վաճառքի և գնման արգելքը կարող է դիտարկվել, եթե ըստ ռիսկի գնահատման, ռիսկի մեղմման միջոցառումները կամ առաջավոր մարքեթինգային փորձը բավարար չեն մարդկանց և շրջակա միջավայրի համար արտադրանքի անվտանգությունն ապահովելու համար:

9.4.1 Սույն կանոնագրքով կարգավորվող բոլոր իրավաբանական անձինք պետք է օժանդակեն տեղեկատվության փոխանակման գործընթացին և նպաստեն այնպիսի հարցերի շուրջ տեղեկատվության մատչելիությանը, ինչպիսիք են թունաքիմիկատների վտանգավորությունը և ռիսկերը, դրանց մնացորդային քանակները սննդամթերքներում, խմելու ջրում և շրջակա միջավայրում, թունաքիմիկատների օգտագործումը ոչ պարենային ապրանքների արտադրության համար, ՎԴԻՊ-ը/ՅՓԴԻՊ-ը, թունաքիմիկատների արդյունավետությունը, առավել վտանգավոր թունաքիմիկատների այլընտրանքները և համապատասխան նորմատիվ իրավական միջոցառումները:

1.2 Առավել վտանգավոր թունաքիմիկատներին վերաբերող հարցեր

Վտանգավորությունը

Թունաքիմիկատները կարելի է համարել առավել վտանգավոր, եթե դրանք մարդու առողջության կամ շրջակա միջավայրի համար ներկայացնում են սուր կամ քրոնիկական ազդեցության հատկապես բարձր մակարդակներ:

Սուր թունունակության բարձր մակարդակը վերաբերում է արտադրանքի այն հատկություններին, որոնք կարող են հանգեցնել անմիջական առողջական հետևանքների: Սուր թունունակությամբ թունաքիմիկատները կարող են մեծ ազդեցություն ունենալ ոչ միայն այն մարդկանց վրա, որոնք պատրաստում են խառնուրդը կամ կատարում են թունաքիմիկատներով մշակումներ, այլև անցորդների, թունաքիմիկատներով մշակված դաշտ մուտք գործող անձանց և այն սպառողների վրա, որոնք մթերքներն օգտագործում են թունաքիմիկատով մշակումից շատ կարճ ժամանակ անց: Այլ աշխատանքները, որոնց ընթացքում այդպիսի թունաքիմիկատները կարող են ձիսկեր առաջացնել, ներառում են կիրառման սարքավորումների պահեստավորումը, մաքրումը, դատարկ բեռնարկղերի և աղտոտված կյուրթերի, օրինակ՝ ձեռնոցների, հեռացումը:

Մասնագիտական սուր թունավորման ռիսկից բացի, մի շարք երկրներում արձանագրվել են ինքնավնասման նպատակով սուր թունունակությամբ թունաքիմիկատների օգտագործման դեպքեր: Մի շարք երկրների փորձը ցույց է տվել, որ նման արտադրանքների հասանելիության արգելումը կամ սահմանափակումը զգալիորեն նվազեցնում են ինքնասպանությունների հետևանքով մահվան դեպքերը: ԱՅԿ-ն, հետևաբար, խորհուրդ է տալիս ինքնասպանության համար հաճախ օգտագործվող արտադրատեսակները դարձնել պակաս մատչելի⁵:

Քրոնիկ թունունակությունը վերաբերում է արտադրանքի այն հատկություններին, որոնք կրկնվող կամ երկարատև ազդեցության պատճառով կարող են առաջացնել բացասական հետևանքներ: Նման բացասական հետևանքներն, օրինակի համար, կարող են ներառել քաղցկեղների առաջացումը կամ զարգացման խանգարումները:

Շրջակա միջավայրի համար վտանգները ներառում են ջրային պաշարների և հողերի աղտոտումը և ոչ թիրախային օրգանիզմների համար սուր կամ քրոնիկ թունունակությունը, որոնք կարող են հանգեցնել էկոհամակարգի գործառույթների խախտման, ինչպիսին, օրինակ, փոշոտող միջատների կամ բնական վնասատուների ճնշումն է:

ԱՎԹ-ները հաճախ ավելի հին սերնդի չարտոնագրված արտադրանքներ են, որոնք ավելի էժան են ու մատչելի⁶: Եկամտի բարձր մակարդակ ունեցող երկրներում (ԵՄՄՈՒԵ) շուկայից դուրս եկած ապրանքները հաճախ եկամտի ցածր և միջին մակարդակ ունեցող երկրներում (ԵՑՄՄՈՒԵ-ներ) մնում են գրանցված: Նպաստող գործոնները կարող են ներառել՝

- գրանցման անբավարար գործող համակարգերը, որոնց վրա ազդում են սահմանափակ մարդկային և ֆինանսական ռեսուրսները և ունեն ռիսկերի գնահատման անբավարար կարողություններ,
- պատկերացումներն առ այն, որ աղքատ ֆերմերները պետք է ապահովված լինեն էժան թունաքիմիկատների հասանելիությամբ,
- այլընտրանքների մասին գիտելիքների բացակայությունը:

Ավելին, եթե նախկինում հին սերնդի առավել վտանգավոր թունաքիմիկատներն ավելի շատ արտադրվում էին եկամտի բարձր մակարդակ ունեցող երկրներում, ապա ներկայումս դրանց արտադրությունը գնալով աճում է եկամուտների ցածր մակարդակ ունեցող երկրներում:

Որոշ դեպքերում եկամտի բարձր մակարդակ ունեցող երկրները պահպանում են ԱՎԹ-ների օգտագործման որոշակի տեսակների գրանցումը, բայց և այնպես ռիսկի մեղմման խիստ միջոցառումների միջոցով դրանց նկատմամբ իրականացնում են վերահսկողություն: Նման միջոցառումների իրականացումը ԵՑՄՈՒԵ-ներում, վերջիններիս սահմանափակ կարողությունների պատճառով, հաճախ համարվում է ավելի քիչ հավանական:

5. «Ինքնասպանության կանխարգելում. գլոբալ հրամայական», Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, 2014թ. (Preventing suicide: a global imperative, World Health Organization 2014)

6. Թունաքիմիկատների ընտրության տնտեսական կողմերը մշակված են 3.2 բաժնում:

Պետք է նշել, որ թունաքիմիկատների օգտագործման տեսակետից գոյություն ունի զգալի տարբերություն եկամուտների բարձր և ցածր մակարդակ ունեցող երկրների բնակիչների թվաքանակի միջև: ԵԲՄՈՒԲ-ներում գյուղատնտեսությունում ներգրավված բնակչությունը սովորաբար կազմում է 5%-ից պակաս⁷: ԵՑՄՈՒԲ-ներում գյուղատնտեսությունում ներգրավված բնակչության տոկոսը հաճախ շատ ավելի բարձր է (սովորաբար, 40%-ից ավելի): Օրինակ, ենթասահարային Աֆրիկայում միջին ցուցանիշը կազմում է մոտ 60%: ԵՑՄՈՒԲ-ներում աղքատությունը, սահմանափակ կրթությունը, հեռավորությունը և տեղեկատվության տարածման անարդյունավետ համակարգերը դասվում են այն գործոնների թվին, որոնք ազդում են թունաքիմիկատների օգտագործման վերաբերյալ բոլոր ֆերմերների ուսուցման և խորհրդատվության տրամադրման գործնական հնարավորության վրա: Ավելին, ԵՑՄՈՒԲ-ներում ֆերմերների ուսուցման ինստիտուցիոնալ կարողությունների և թունաքիմիկատների օրենսդրության կիրառման մակարդակը սովորաբար ավելի ցածր է:

Անհատական պաշտպանության միջոցներն (ԱՊՄ) առավել վտանգավոր թունաքիմիկատների համար, ինչպես նշվում է պիտակում կամ վերապատրաստման ծրագրերում, հաճախ ԵՑՄՈՒԲ-ներում մատչելի կամ կիրառելի չեն՝ չափազանց թանկ լինելու կամ շոգ, խոնավ կլիմայական պայմաններում հազնելու համար ոչ հարմարավետ լինելու պատճառով: Շատ ԵՑՄՈՒԲ-ներում, թունաքիմիկատների գյուղական խանութներում վաճառվող ԱՊՄ-ները (օրինակ, կենցաղային ձեռնոցները և փոշուց պաշտպանող հասարակ դիմակները) հաճախ լինում են անբավարար որակի կամ ոչ հարմար՝ առավել վտանգավոր թունաքիմիկատների մի շարք պատրաստուկային ձևերի հետ աշխատանքի համար:

ԵՑՄՈՒԲ-ներում ընդհանուր գործածության թունաքիմիկատների սրկման սարքավորումները (հիմնականում թիկնափոկային /շալակի/ սրկիչները) սովորաբար ոչ այնքան բարդ են, որքան ԵԲՄՈՒԲ-ներում: Թունաքիմիկատների սրկիչ սարքավորումները ԵՑՄՈՒԲ-ներում հաճախ չեն կարգավորվում, ինչը կարող է ազդել դրանց տեխնիկական բնութագրերի և որակի վրա: Ծախսային գործոնները հաճախ խոչընդոտում են սարքավորումների ժամանակին փոխարինմանը: Տեխնիկական սպասարկումը և անվտանգ մաքրումն ու պահպանումը հաճախ կապված են խնդիրների հետ: Արտահոսող կամ վատ չափաբերված սարքավորումները և կիրառման իմպրովիզացված մեթոդները կարող են նպաստել ռիսկերի մեծացմանը:

Թունաքիմիկատների պատշաճ օգտագործման վրա ազդող այլ գործոնները կարող են ներառել՝ վնասատուների և դրանց դեմ պայքարի ընտրանքների, մատչելի արտադրանքների և դրանց ռիսկերի մասին օգտագործողի գիտելիքների սահմանափակությունը, պիտակներն ընթերցել չկարողանալը կամ չհասկանալը (առանձին վայրերում գրագիտության ցածր մակարդակ), թերի պիտակները, ազգային լեզվով պիտակների բացակայությունը, պիտակում նշված հրահանգների կատարման համար պահանջվող համեմատաբար մեծ ծախսերը (օրինակ, առաջարկվող ԱՊՄ-ների և կիրառման սարքավորումների ձեռքբերման համար) և այլն:

Այս պատճառներով է բացատրվում այն, որ հաճախ ԵՑՄՈՒԲ-ներում գոյություն ունի զգալի անհամապատասխանություն օգտագործման ընդհանուր պայմանների և պիտակի վրա նշված հրահանգների միջև, որը կարող է հանգեցնել մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա ազդեցության և, հետևաբար, ռիսկերի առաջացման՝ գերազանցելով այն մակարդակը, որը կարելի է կանխատեսել պիտակի հրահանգներին հետևելու դեպքում:

ԵՑՄՈՒԲ-ներում ԱՎԹ-ներով թունավորման դեպքերը հաճախ մնում են չբացահայտված՝ մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա թունաքիմիկատների ազդեցության համարժեք մշտադիտարկման և հաշվետվողականության համակարգերի բացակայության պատճառով: Լրացուցիչ գործոններից են թունաբանական կենտրոնների բացակայությունը և թունաքիմիկատներով թունավորումների ախտորոշման, բուժման և թունավորման մասին հաշվետվություն ներկայացնող բժշկական հաստատությունների սահմանափակ թիվը:

Այն վայրերում, որտեղ ԱՎԹ-ների օգտագործումը շարունակվում է, չի բացառվում, որ մարդիկ իրագրել չլինեն պակաս վտանգավոր այլընտրանքների մասին: Մասնավորապես, կենսաբանական այլընտրանքների առումով կարող է լինել նաև նման ապրանքների առկայության և բաշխման հետ կապված սահմանափակումներ և դրանց գործածության մասին գիտելիքների պակաս:

7. ԱՄԿ-ի սահմանած աշխատանքի շուկայի հիմնական ցուցանիշները, 2011թ. (ILO Key indicators of the labour market, 2011)

1.3 Սույն փաստաթղթի նպատակը

Սույն ուղեցույցը նպատակ ունի օգնել թունաքիմիկատների ոլորտի կարգավորման սահմանափակ ռեսուրսներ ունեցող ազգային կամ տարածաշրջանային մարմիններին՝ անդրադառնալ ԱՎԹ-ների խնդրին, որը հիմնվում է նույնականացման, գնահատման և մեղմման երեք քայլերի վրա: Ուղեցույցը նաև նպատակ ունի ընդգծել թունաքիմիկատների վերաբերյալ համապատասխան օրենսդրության, ռիսկի և կարիքների գնահատման կարևորությունը՝ որպես գրանցման գործընթացի մաս:

1.4 Կիրառման ոլորտը

Սույն ուղեցույցը կիրառվում է բոլոր թունաքիմիկատների, այդ թվում, գյուղատնտեսությունում, հանրային առողջապահությունում, տնային տնտեսությունում, հանգստի վայրերում օգտագործվող և արդյունաբերական թունաքիմիկատների նկատմամբ:

Այս փաստաթղթում ներկայացված տեղեկատվությունը լրացվում է ՊԳԿ/ԱՅԿ-ի վերջերում տեղադրված վնասատուների և թունաքիմիկատների դեմ պայքարի վերաբերյալ այլ ուղեցույցներով և գործիքներով: Դրանք ներառում են ՊԳԿ / ԱՅԿ-ի «Թունաքիմիկատների գրանցման ուղեցույց»-ը [2010թ.], ՊԳԿ / ԱՅԿ ուղեցույցը «Թունաքիմիկատների ազդեցության հետևանքով առաջացած առողջության և շրջակա միջավայրի հետ կապված ռեպերի մասին հաշվետվական համակարգի մշակման մասին» [2009թ.], ՊԳԿ / ԱՅԿ ուղեցույցը «Թունաքիմիկատների օրենսդրության վերաբերյալ» [2015թ.] և ՊԳԿ-ի «Թունաքիմիկատների գրանցման գործիքակազմ»-ը, որն ապահովում է ռիսկի գնահատման վերաբերյալ ուղեցույցը (հավելված II):

1.5 Հղումներ

Սույն ուղեցույցը պարունակում է այլ փաստաթղթերին արված բազմաթիվ հղումներ: Այդ փաստաթղթերի հասանելիությունը ոլորտային համար սույն փաստաթղթի տարբեր մասերում ներառված են հիպերհղումներ: Տպագիր օրինակից օգտվողների համար հիմնական հղումներն իրենց լրիվ ինտերնետային հասցեների հետ միասին նշված են «Լրացուցիչ նյութեր և տեղեկատվական աղբյուրներ» բաժնում:

ՊԳԿ-ն և ԱՅԿ-ն շահագրգռված են, որպեսզի Դուք ներկայացնեք Ձեր առաջարկությունները կամ մեկնաբանությունները (որոնք կարող եք ունենալ այդ ուղեցույցն օգտագործելուց հետո), քանի որ դրանք կարող են նպաստել հետագա հրատարակությունների բարելավմանը: Խնդրում ենք ուղարկել Ձեր առաջարկությունները կամ մեկնաբանությունները pesticide-management@fao.org հասցեին:

2. ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄ

2.1 Սահմանում

ՊԳԿ/ԱՅԿ–ի «Թունաքիմիկատների կառավարման միջազգային վարքագծի կանոնագիրք»–ն առավել վտանգավոր թունաքիմիկատներին տալիս է հետևյալ սահմանումը.

Թունաքիմիկատներ, որոնք համաձայն այնպիսի միջազգայնորեն ընդունված դասակարգման համակարգերի, ինչպիսիք են ԱՅԿ–ն կամ Զիմիական կյուլթերի դասակարգման և պիտակավորման գլոբալ ներդաշնակեցման համակարգը (ԳՆՅ), կամ համաձայն համապատասխան միջազգային պարտադիր համաձայնագրերի կամ կոնվենցիաների ցուցակների, ընդունված է համարել առողջության և շրջակա միջավայրի համար սուր կամ քրոնիկական վտանգավորության հատկապես բարձր մակարդակներ ներկայացնող: Բացի այդ, որևէ երկրում օգտագործման պայմաններում առողջությանը կամ շրջակա միջավայրին ծանր կամ անդառնալի վնաս պատճառող թունաքիմիկատները նույնպես կարող են դիտարկվել և համարվել որպես առավել վտանգավոր թունաքիմիկատներ:

2.2 Չափանիշներ

ՊԳԿ / ԱՅԿ–ի Թունաքիմիկատների կառավարման վերաբերյալ համատեղ խորհրդակցության (2008թ.) առաջարկությամբ առավել վտանգավոր թունաքիմիկատները պետք է սահմանվեն որպես թունաքիմիկատներ, որոնք ունեն հետևյալ բնութագրերից մեկը կամ մի քանիսը.

Չափանիշ 1. Թունաքիմիկատների պատրաստուկային ձևերը, որոնք համապատասխանում են ԱՅԿ–ի ըստ վտանգավորության աստիճանի թունաքիմիկատների դասակարգման ևա կամ Լբ դասերի չափանիշներին, կամ

Չափանիշ 2. Թունաքիմիկատների ազդող կյուլթերը և դրանց պատրաստուկային ձևերը, որոնք համապատասխանում են «Զիմիական կյուլթերի դասակարգման և պիտակավորման գլոբալ ներդաշնակեցված համակարգ»–ի (ԳՆՅ) քաղցկեղածնության 1Ա և 1Բ դասերի չափանիշներին, կամ

Չափանիշ 3. Թունաքիմիկատների ազդող կյուլթերը և դրանց պատրաստուկային ձևերը, որոնք համապատասխանում են «Զիմիական կյուլթերի դասակարգման և պիտակավորման գլոբալ ներդաշնակեցված համակարգ»–ի (ԳՆՅ) մուտագենության 1Ա և 1Բ դասերի չափանիշներին, կամ

Չափանիշ 4. Թունաքիմիկատների ազդող կյուլթերը և դրանց պատրաստուկային ձևերը, որոնք համապատասխանում են «Զիմիական կյուլթերի դասակարգման և պիտակավորման գլոբալ ներդաշնակեցված համակարգ»–ի (ԳՆՅ) վերարտադրողական թունունակության 1Ա և 1Բ դասերի չափանիշներին, կամ

Չափանիշ 5. Ստոկիոլմի կոնվենցիայի Ա և Բ հավելվածներում թվարկված թունաքիմիկատների ազդող կյուլթերը և այն թունաքիմիկատները, որոնք համապատասխանում են կոնվենցիայի հավելված Դ–ի 1–ին պարբերության բոլոր չափանիշներին, կամ

Չափանիշ 6. Ռոտերդամի կոնվենցիայի III հավելվածում թվարկված թունաքիմիկատների ազդող կյուլթերը և պատրաստուկային ձևերը, կամ

Չափանիշ 7. Մոնրեալի արձանագրությունում թվարկված թունաքիմիկատների ազդող նյութերը, կամ

Չափանիշ 8. Թունաքիմիկատների ազդող նյութերը և դրանց պատրաստուկային ձևերը, որոնք առանձնանում են մարդու առողջության կամ շրջակա միջավայրի վրա ծանր կամ անդամնալի հետևանքներ առաջացնելու դեպքերի բարձր մակարդակով:

Այս չափորոշիչների վերաբերյալ լրացուցիչ և առավել մանրամասն տեխնիկական տեղեկատվությունը տրամադրվում է հավելված 1-ում: Թունաքիմիկատների վտանգավորության վերաբերյալ միջազգային հետազոտությունը շարունակվում է, և հնարավոր է, որ ՊԳԿ-ի և ԱՅԿ-ի⁸ կողմից միջազգային համաձայնության (կոնսենսուսի) ձեռքբերման պարագայում ավելացվեն այլ չափանիշներ ևս: Միջազգային հետազոտությունը ներկայումս կենտրոնացած է, օրինակ, Էնդոկրին համակարգի խանգարումներ առաջացնող թունաքիմիկատների և փոշոտողների համար թունոնակության հարցերի վրա:

2.3 Գործածության մեջ գտնվող առավել վտանգավոր թունաքիմիկատների նույնականացում

Գործածության մեջ գտնվող ԱՎԹ-ների նույնականացման համար, գրանցված թունաքիմիկատների ցանկը պետք է ուսումնասիրվի ԱՎԹ-ների համար սահմանված չափանիշների նկատմամբ, որոնք ներկայացված են բաժին 2.2-ում: Սա կարող է իրականացնել թունաքիմիկատների գրանցման մարմինը կամ, օրինակ, հատուկ նպատակով ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խումբը:

1-7 չափանիշների համար գոյություն ունի տեղեկատվական աղբյուրների ցանկ և համապատասխան ուղեցույց, որոնք կարելի է գտնել համացանցում: Օգտագործման հարմարավետության նպատակով, հավելված I-ն ապահովում է տեղեկատվության աղբյուրների ամփոփ նկարագիրը:

Գնահատել, թե արդյո՞ք տվյալ ազդող նյութը կամ պատրաստուկային ձևը համապատասխանում է 8-րդ չափանիշին, ավելի բարդ է, քանի որ դա կախված է առանձին երկրներում առկա իրավիճակից: Կարող են դիտարկվել հետևյալ ցուցանիշները.

- Համաճարակաբանական հսկողությունը ցույց է տալիս թունավորման կամ շրջակա միջավայրի վրա ազդեցության դեպքերի համեմատաբար բարձր ցուցանիշների առկայություն:
- Թունաքիմիկատների կիրառման գործելակերպերի նկատմամբ համաճարակաբանական հսկողությունը վկայում է սովորական օգտագործման պայմաններում ազդեցության բարձր ռիսկերի առկայության մասին: Համեմատաբար վտանգավոր արտադրանքի պիտակի վրա գրված հրահանգների համեմատությունը փաստացի օգտագործման գործելակերպերի հետ հետևողականորեն ցույց է տալիս, որ գոյություն ունի զգալի բաց՝ ձեռնարկվելիք և փաստացի ձեռնարկված նախազգուշական միջոցների միջև: Օրինակի համար, անհրաժեշտ անհատական պաշտպանության միջոցները մատչելի չեն, ջրային օրգանիզմների համար բարձր թունոնակ թունաքիմիկատները լայնորեն կիրառվում են բրնձի մշակության համար, թունաքիմիկատները լայնորեն օգտագործվում են այնպիսի մշակաբույսերի համար, որոնց համար դրանք թույլատրված չեն և այլն: Նման դեպքերում պետք է իրականացվեն թիրախային հետազոտություններ՝ պարզելու համար, արդյո՞ք արտադրանքի օգտագործումը համապատասխանում է չափորոշիչ 8-ին:

8. Սա կիրականացվի ՊԳԿ / ԱՅԿ-ի Թունաքիմիկատների կառավարման վերաբերյալ համատեղ խորհրդակցության կողմից՝ նույն վերանայման գործընթացին համապատասխան, որը մշակել է առկա չափանիշները:

Այն երկրները, որոնք չունեն արդյունավետ հսկողության համակարգեր, կարող են օգտագործել այլ երկրներում թունաքիմիկատների օգտագործման համադրելի իրավիճակներում չափանիշ 8-ի ներքո որպես ԱՎԹ-ներ սահմանված արտադրանքների մասին տեղեկատվությունը՝ որպես պոտենցիալ խնդիրների կողմնորոշիչներ: Այս արտադրատեսակների օգտագործումը պետք է հետազոտվի թիրախային ուսումնասիրությունների միջոցով, որոշելու համար, թե արդյո՞ք այդ արտադրատեսակները խնդիրներ են ստեղծում տվյալ երկրում օգտագործման պայմաններում, և, հետևաբար, արդյո՞ք դրանք պետք է դիտարկել որպես ԱՎԹ-ներ: Այդպիսի տեղեկատվությունը կարող է վերաբերել՝

- թունաքիմիկատների օգտագործման համադրելի իրավիճակներում գտնվող երկրներին, որոնք ի պատասխան առողջապահական կամ բնապահպանական դեպքերի, որոշակի թունաքիմիկատների նկատմամբ ձեռնարկել են կարգավորող միջոցառումներ:
- թունաքիմիկատների օգտագործման համադրելի իրավիճակներում գտնվող երկրներին, որոնց կողմից համաճարակաբանական հսկողության, հետազոտության կամ դեպքերի մասին ներկայացված տվյալները մատնանշում են որոշակի թունաքիմիկատների հետ կապված առողջապահական կամ բնապահպանական մեծ թվով խնդիրների առկայությունը:

Այն երկրներում, որտեղ թունաքիմիկատների գրանցման համակարգն արդյունավետորեն չի կիրառվում, գրանցված թունաքիմիկատների ցանկը պետք է լրացվի ներմուծվող թունաքիմիկատների ցանկերով կամ թունաքիմիկատների օգտագործման վերաբերյալ դաշտային հետազոտությունների արդյունքներով: Այդպիսի ցանկերը հասանելի չլինելու դեպքում, կարևոր է համարվում նման հետազոտությունների անցկացումը: Մարդիկ պետք է նաև տեղյակ լինեն այն մասին, որ որոշ ապրանքատեսակներ կարող են գրանցված մնալ, սակայն գործնականում դրանք օգտագործումն ավարտված լինի:

3. ԳՆԱՅԱՏՈՒՄ

Որևէ երկրում գործածության մեջ գտնվող ԱՎԹ-ների նույնականացմանը հաջորդող քայլը պետք է լինի այդ արտադրատեսակների՝ տվյալ երկրում օգտագործման պայմաններում մարդու առողջության և շրջակա միջավայրի համար ներկայացրած ռիսկերի գնահատումը և այդ արտադրատեսակների նկատմամբ պահանջարկի վերանայումը՝ հաշվի առնելով մատչելի այլընտրանքների առկայությունը:

3.1 Ռիսկի գնահատում

ՊԳԿ-ի «Թունաքիմիկատի գրանցման գործիքակազմ»-ը (հավելված II) ապահովում է ռիսկի գնահատման վերաբերյալ գործնական ուղեցույց՝ թունաքիմիկատների գրանցման կամ առկա գրանցումների վերանայման համար: Ռիսկի գնահատման սահմանափակ հնարավորություններ ունեցող երկրներում այն նաև պարունակում է ուղեցույց՝ այլ երկրների իրականացրած ռիսկի գնահատման արդյունքների օգտագործման և այդպիսի տեղեկատվությունը օգտագործման ազգային պայմաններին հարմարեցնելու վերաբերյալ:

Ռիսկի գնահատում իրականացնելու համար կարևոր է հասկանալ «ռիսկ» հասկացությունը (ներդիր 2):

Ներդիր 2. «Ռիսկ» հասկացությունը

Ռիսկը վտանգավորության և ազդեցության գործառույթ է՝ $R = f(H \times E)$:

Արտադրանքի վտանգավորությունը որոշվում է ազդող նյութին բնորոշ թունաբանական հատկություններով: Այսպիսով, ռիսկի կրճատմանը կարելի է հասնել երկու եղանակով՝ վտանգավորության կամ ազդեցության կրճատմամբ:

Վտանգավորության կրճատումը հիմնականում ներառում է ավելի պակաս վտանգավոր այլընտրանքի ընտրությունը: Այդ այլընտրանքը կարող է լինել վնասատուների դեմ պայքարի ոչ քիմիական մեթոդը, այլ քիմիական միացությունը կամ միևնույն միացության մեկ այլ պատրաստուկային ձևը:

Ազդեցության կրճատմանը կարելի է հասնել տարբեր եղանակներով (քննարկված են ստորև):

Վտանգավորության բարձր մակարդակը հաստատելուց հետո, ռիսկերի գնահատման համար որպես հիմնական գործոն պետք է դիտարկել ազդեցությունը: Կարևորվում են հետևյալ տիպի ազդեցությունները:

Ազդեցությունը մարդու առողջության վրա

Մարդու առողջության վրա ազդեցությունը ներառում է թե՛ ուղղակի ազդեցությունը և թե՛ սննդային ազդեցությունը:

Մարդու առողջության վրա ուղղակի ազդեցության սցենարները ներառում են մասնագիտական ազդեցությունը (օպերատորներ և աշխատողներ), անցորդների և բնակիչների վրա ազդեցությունը: Մարդիկ ազդեցությանը կարող են ենթարկվել մաշկի հետ շփման կամ ինհալացիայի միջոցով՝ խառնուրդի պատրաստման, կիրառման, փոշեցրված թունաքիմիկատի տարածման, մշակված տարածք կրկնակի մուտք գործելու կամ մշակված մշակաբույսերի կամ աղտոտված սարքավորումների և նյութերի հետ շփման արդյունքում:

Սննդային ազդեցությունը ներառում է աղտոտված սննդամթերքի կամ ջրի միջոցով ազդեցությունը: Սովորաբար, դա կապված է թունաքիմիկատներով մշակված գյուղմթերքների սպառման հետ: Չի բացառվում, որ կարիք լինի հաշվի առնելու բազմակի ազդեցությունների կուտակային և սիներգիկ հետևանքները:

Մարդու առողջության վրա թե՛ ուղղակի և թե՛ սննդային ազդեցության դեպքում, հնարավոր առողջական հետևանքները կարող են ավելի ծանր լինել որոշակի խոցելի խմբերի համար, ինչպիսիք են հղի կամ կրծքով կերակրող կանայք, տղամարդիկ, թույլ իմունիտետ ունեցող անձինք, թերսնված անձինք և այլն:

Երեխաների վրա թունաքիմիկատները կարող են ազդել տարբեր ճանապարհներով, օրինակ, մայրիկների՝ երեխաներին իրենց հետ մշակված դաշտեր տանելու, բնակելի տարածքներում երեխաների՝ ձեռքը բերանը տանելու սովորության, կրծքով կերակրման կամ հղիության ժամանակ ընկերքի միջոցով մորից պտղին փոխանցվելու միջոցով: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել այն տարածքներին, որտեղ երեխաները ներգրավված են գյուղատնտեսական աշխատանքներում⁹:

Ազդեցությունն անասունների, տնային կենդանիների և վայրի բնության վրա

Թունաքիմիկատների օգտագործումը կարող է բացասաբար անդրադառնալ անասունների և տնային կենդանիների, ինչպես նաև այլ ոչ թիրախային օրգանիզմների վրա, ինչպիսիք են փոշոտող և այլ օգտակար միջատները, ջրային օրգանիզմները, թռչունները և վայրի բնության այլ, այդ թվում՝ վտանգված տեսակները:

9. Սա նաև ընդգծվում է վարքագծի կանոնագրքի 6.1.2-րդ հոդվածում և ԱՄԿ-ի համապատասխան կոնվենցիաներում:

Ազդեցությունը շրջակա միջավայրի վրա

Շրջակա միջավայրի վրա ազդեցության բարձր մակարդակը կարող է հանգեցնել ստորգետնյա կամ մակերևութային ջրերի, հողի, օդի և / կամ բույսերի աղտոտմանը: Սա կարող է ազդել հողում բնակվող օրգանիզմների, օգտակար միջատների և Էկոհամակարգերի գործառույթներն ապահովող այլ օրգանիզմների վրա: Որոշ թունաքիմիկատներ կուտակվում են սննդային շղթայում:

Չկանխամտածված ազդեցությունը մշակաբույսերի վրա

Մշակաբույսերի վրա չկանխամտածված ազդեցությունը, որը սովորաբար առաջանում է թունաքիմիկատի փոշեցուման կամ արտահոսքի արդյունքում, կարող է ազդել բերքի առողջության և սննդի անվտանգության վրա: Խնդիր է նաև այն, որ հերբիցիդները, քամու միջոցով ցրվելով, ընկնում են հարևան դաշտերը և վնասում այնտեղ աճող մշակաբույսերը: Խնդիրներից է նաև ինսեկտիցիդներով և ֆունգիցիդներով մշակումներ կատարելու ժամանակ քամու միջոցով դրանց տարածումը հարևան դաշտերի վրա, որը կարող է ազդել հարևանությամբ աճող մշակաբույսերի անվտանգության վրա:

Ազդեցության համատեքստը

Օգտագործման տեղական հանգամանքները կարևոր գործոններից են, որոնք պետք է հաշվի առնել ազդեցության ռիսկի որոշման ժամանակ: Տեղական հանգամանքները, որոնք կարող են մեծացնել թունաքիմիկատների ազդեցությունը, ներառում են.

- սահմանված ԱՊՄ–ների անմատչելիությունը, սահմանափակ մատչելիությունը կամ դրա սահմանափակ օգտագործումը,
- թունաքիմիկատի կիրառման համապատասխան սարքավորումների անմատչելիությունը կամ սահմանափակ հասանելիությունը,
- թունաքիմիկատների անվտանգ պահեստավորման սահմանափակ հնարավորությունները, կիրառման սարքավորումների պահպանման և անվտանգ մաքրման և պահեստավորման սահմանափակ հնարավորությունները,
- թունաքիմիկատների օգտագործման և ռիսկերի մասին խորհրդատվության և գիտելիքների պակասը,
- մշակումից հետո դաշտ մուտք գործելու և բերքահավաքի համար թունաքիմիկատի համար նախատեսված սպասման ժամկետի չպահպանումը,
- թունաքիմիկատով մշակում կատարելու ժամանակ քամու միջոցով թունաքիմիկատի տարածման ռիսկը,
- ժամկետանց պաշարների կամ արտադրանքների մնացորդային քանակությունների կամ դատարկ տարաների համար հեռացման հնարավորությունների / հարմարությունների բացակայությունը:

Ազդեցության մակարդակի գնահատումը

Ռիսկի գնահատման գլխավոր բաղադրիչն ազդեցության մակարդակի գնահատումն է: Դա կարող է կատարվել ազդեցության փաստացի գնահատման կամ անուղղակի գնահատման միջոցով: Ներդիր 3-ում ներկայացված են տարբեր մոտեցումների օրինակները: Գնահատման տարբեր տեսակների համակցումը կարող է ապահովել առավել ծանրակշիռ արդյունքներ:

Ներդիր 3. Ազդեցության գնահատման տարբեր մոտեցումների օրինակներ

Փաստացի ազդեցությունների համաճարակաբանական հսկողություն

Սա կարող է ներառել կոնկրետ միացության կամ արտադրանքի հետ կապված թունավորման դեպքերի վերաբերյալ առկա տվյալների հավաքագրումը, որն, օրինակ, կարող է հավաքագրվել թունաբանական կենտրոններից, հիվանդանոցից կամ առողջապահական կլինիկաներից, կամ գյուղատնտեսության աջակցության կենտրոնների աշխատակիցներից, ապակենտրոնացված բույսերի պաշտպանության աշխատակիցներից կամ հիվանդությունների փոխանցողների դեմ պայքարի ծրագրային աշխատակազմից: Այնտեղ, որտեղ ցանկալի է, նման տվյալները կարող են համարվել կոնկրետ թիրախային համայնքային մակարդակով հետազոտությունների միջոցով, որոնց օգնությամբ հնարավոր կլինի կոնկրետ ուսումնասիրել այն համայնքներում տեղի ունեցած թունավորման դեպքերը, որտեղ տվյալ թունաքիմիկատն օգտագործվում է համեմատաբար մեծ թվով մարդկանց կողմից:

Անհրաժեշտ նախազգուշական միջոցների կիրառման մակարդակի գնահատումը

Սա ներառում է օգտագործողների՝ անձնական և հանրային առողջության և շրջակա միջավայրի անհրաժեշտ պահպանության վերաբերյալ պիտակում ներառված հրահանգների կատարման կարողությունների և պատրաստակամության գնահատումը: Նման գնահատումը իրականացնելիս պետք է հաշվի առնել տեղական գործոնները, որոնք կարող են նպաստել ազդեցության մեծացմանը, ինչպես նաև փաստացի գործելակերպերը: Պահանջվող նախազգուշական միջոցառումների և փաստացի գործելակերպերի ու աշխատանքային պայմանների միջև տարբերությունները թույլ կտան պատկերացում կազմել ազդեցության և ռիսկի մասին: Այս մոտեցման նախապայմաններից է հասկանալի և ամբողջական տեղեկատվություն պարունակող պիտակների առկայությունը: Դրանց բացակայության պարագայում, որպես տեղեկատվության աղբյուր կարող են ծառայել համադրելի երկրներում կիրառվող համապատասխան պիտակները, կամ այլ տեղեկատվական աղբյուրներ, ինչպիսիք են, օրինակ, թունաքիմիկատների օգտագործման հետ կապված անվտանգության և առողջապահության վերաբերյալ ուղեցույցները:

Ազդեցության գնահատման մոդելներ

Մասնագիտական և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակով մշակվել են մոդելներ: Դրանք տարբեր են՝ համեմատաբար պարզից մինչև բավականին բարդ: ՊԳԿ-ի «Թունաքիմիկատների գրանցման գործիքակազմ»-ը (հավելված II) ներառում է դրանց օգտագործման վերաբերյալ ուղեցույցը և մի շարք օրինակներ:

Փաստացի ազդեցության չափումներ

Որոշ դեպքերում ԱՎԹ-ների փաստացի ազդեցության չափումը հնարավոր է: Դա կարելի է անել ուղղակի ազդեցության մշտադիտարկման միջոցով (հետազոտելով թունաքիմիկատի ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա տվյալ թունաքիմիկատով աշխատելու ժամանակ) կամ բիոմոնիթորինգի միջոցով (արյան, մեզի կամ կրծքի կաթի մեջ թունաքիմիկատի կամ դրա մետաբոլիտներից որևէ մեկի հետազոտությունը): Ազդեցության չափումները սովորաբար բավականին բարդ և թանկարժեք հետազոտություններ են, որի պատճառով դրանք ոչ այնքան հաճախ են իրականացվում եկամուտների ցածր մակարդակ ունեցող երկրներում:

3.2. Կարիքների գնահատում

Կարիքների գնահատումն օգնում է սահմանել, թե ինչ չափով է տվյալ արտադրանքի օգտագործումը համապատասխանում իրական կարիքներին, ինչ առանձնահատուկ օգուտներ է ապահովում և արդյո՞ք առկա են վնասատուների դեմ պայքարի պակաս վտանգավոր և արդյունավետ այլընտրանքային մոտեցումներ կամ արտադրանքներ, որոնք ավելի քիչ ռիսկ են պարունակում:

Թունաքիմիկատի ռիսկի նվազեցման մոտեցումը, ինչպես նկարագրված է ՊԳԿ-ի «Վնասատուների և թունաքիմիկատների կառավարման քաղաքականության մշակման մասին» ուղեցույցում (2010թ.), բաղկացած է երեք հիմնական քայլերից (ներդիր 4): Առաջին քայլը ներառում է կարիքների գնահատումը:

Ներդիր 4. Թունաքիմիկատների ռիսկերի կրճատմանն ուղղված քայլերը

1. Կրճատել թունաքիմիկատներից կախվածությունը: Որոշել, թե թունաքիմիկատների օգտագործման ներկայիս մակարդակը ինչ չափով է համապատասխանում իրական կարիքներին և վերացնել թունաքիմիկատների չհիմնավորված օգտագործումը: Արդյունավետորոն օգտագործել վնասատուների դեմ պայքարի ոչ քիմիական մեթոդները՝ բուսաբուծության կայուն ինտենսիվացման և հիվանդությունների փոխանցողների դեմ ինտեգրված պայքարի համատեքստում:

2. Ընտրել ամենացածր ռիսկ պարունակող թունաքիմիկատները: Եթե թունաքիմիկատների օգտագործումն անհրաժեշտություն է, ապա գրանցված մատչելի արտադրանքներից պետք է ընտրել մարդու առողջության և շրջակա միջավայրի համար նվազագույն ռիսկ պարունակող արտադրանքները, որոնք արդյունավետ են վնասատուների կամ հիվանդությունների դեմ պայքարում:

3. Ապահովել ընտրված արտադրանքների թույլատրված կիրառման համար պատշաճ օգտագործումը՝ ազգային կանոնակարգերին ու միջազգային չափանիշներին համապատասխան:

Կարիքների գնահատումը ներառում է հետևյալը՝

- Նույնականացված ԱՎԹ-ների հաշվառումը և դրանց օգտագործման պատճառները,
- արդյունավետ և հնարավորինս քիչ ռիսկեր պարունակող հնարավոր այլընտրանքների բացահայտումը, որոնք կարող են փոխարինել ԱՎԹ-ներին,
- ԱՎԹ-ների համար սահմանված կիրառությունների անհրաժեշտության վերանայումը՝ հաշվի առնելով առկա այլընտրանքները և տնտեսական կողմերը:

Այլընտրանքների առկայությունը

Հաճախ մարդիկ կարծիք են հայտնում առ այն, որ ԱՎԹ-ները պետք է մատչելի լինեն, քանի որ դրանց համար չեն կարող լինել լավ այլընտրանքներ: Դա կարող է լինել սխալ պատկերացում, որը կարող է շարունակել գոյություն ունենալ՝ օգտագործողի սովորույթների կամ սահմանափակ գիտելիքների վրա հիմնված խորհրդատվության կամ այդ արտադրանքներով հետաքրքրված անձանց պատճառով: Մեծ մաս դեպքերում առկա են ավելի քիչ ռիսկեր պարունակող այլընտրանքներ: Սրանք կարող են լինել համապատասխան բիոթունաքիմիկատները կամ վնասատուների դեմ պայքարի ոչ քիմիական մոտեցումները, պակաս վտանգավոր քիմիական նյութերը կամ տարբեր պատրաստուկային ձևերը, որոնք ավելի քիչ ռիսկ են առաջացնում: Նախընտրելի են համարվում վնասատուների դեմ ինտեգրված պայքարը և հիվանդություններ փոխանցողների դեմ ինտեգրված պայքարը: Նույնը վերաբերում է այլ ագրո-էկոլոգիական¹⁰ արտադրական համակարգերին, ինչպիսին օրգանական գյուղատնտեսությունն է:

10. ՊԳԿ-ն ագրոէկոլոգիան բնութագրում է որպես էկոլոգիական հասկացությունների և սկզբունքների կիրառման գիտություն՝ կայուն սննդի համակարգերի նախագծման և կառավարման համար: Ագրոէկոլոգիան պարենային անվտանգության և սնունդի համար. ՊԳԿ-ի ագրոէկոլոգիայի վերաբերյալ միջազգային սիմպոզիումի նյութեր, 2014թ., Հռոմ, Իտալիա (Agroecology for food security and nutrition – Proceedings of the FAO International Symposium on Agroecology, 2014, Rome, Italy)

Ներդիր 5. ՎԴԻՊ և ՅՓԴԻՊ սահմանումները

Վարքագծի կանոնագիրքը ՎԴԻՊ–ը սահմանում է որպես վնասատուների դեմ պայքարի բոլոր հնարավոր մեթոդների զգույշ համադրում և համարժեք միջոցառումների հետևողական ինտեգրում, որը ճնշում է վնասատուների պոպուլյացիաների զարգացումը և թունաքիմիկատներն ու այլ միջամտությունները պահում է այն մակարդակների վրա, որոնք տնտեսապես հիմնավորված են և կրճատում կամ նվազագույնի են հասցնում վտանգը մարդու առողջության և շրջակա միջավայրի համար: ՎԴԻՊ–ը կարևորում է ագրոէկոհամակարգերի հնարավորինս նվազագույն քայքայմամբ առողջ մշակաբույսերի աճեցումը և խրախուսում է վնասատուների դեմ պայքարի բնական մեխանիզմները: Վարքագծի կանոնագիրքում նույնօրինակ սահմանում է տրված նաև հիվանդություններ փոխանցողների դեմ ինտեգրված պայքարին (ՅՓԴԻՊ):

Օգտակար մոտեցում կարող է լինել նույնօրինակ գյուղատնտեսական պայմաններ ունեցող այլ երկրներում մշակաբույսերի պաշտպանության մեթոդների ուսումնասիրությունը, որոնք հրաժարվել են որոշակի ԱՎԹ–ների օգտագործումից: Սա կարող է օգտակար տեղեկատվություն ապահովել այդ ԱՎԹ–ների այլընտրանքների առկայության և դրանց կենսունակության վերաբերյալ: Երկրի ներսում կարող են լինել նաև այնպիսի ոլորտներ, որտեղ այլընտրանքները հաջողությամբ ներդրվել են և կարող են օրինակ ծառայել այլ ոլորտների համար:

Այնուամենայնիվ, հնարավոր է լինեն կոնկրետ իրավիճակներ, երբ ԱՎԹ–ների ներկայիս գործածության տեսակների համար պատշաճ այլընտրանքներ գոյություն չունենան: Սա նաև կարող է ենթադրել դիմադրության հակազդեցության ռազմավարությունների որոշակի սահմանափակումներ: Այլ կոնկրետ նախատեսված դեպքերում, նպատակահարմար կարող է լինել հետագա օգտագործման տարբերակի ապահովումը՝ ունենալով պահեստային տարբերակ, եթե հետագայում այլընտրանքները կորցնեն իրենց արդյունավետությունը և առկա չլինեն հանրային առողջապահության կամ տնտեսության համար մտահոգություն պատճառող վնասատուների դեմ պայքարի այլ ընտրանքներ: Նման իրավիճակների առաջացման դեպքում, բացառությունները պետք է կրեն ժամանակավոր բնույթ՝ մինչև նոր այլընտրանքների բացահայտումը:

Տնտեսական ասպեկտներ

Շատ ԱՎԹ–ներ հայտնաբերվում են շուկայի Էժան չպատենտավորված (զեներիկ) արտադրանքների բաժնում: Նվազ վտանգավոր այլընտրանքների ավելի բարձր գները հաճախ Նշվում են որպես օգտագործումը խոչընդոտող¹¹ հանգամանք: Մտահոգությունը պայմանավորված է նրանով, որ որոշակի ԱՎԹ–ների հասանելիության սահմանափակման դեպքում ֆերմերները հաճախ չեն ունենում այլընտրանքներ ձեռք բերելու հնարավորություն և զրկված են լինում վնասատուների դեմ պայքարի մատչելի տարբերակներից: Ուստի կարևոր է հասկանալ և զգուշորեն դիտարկել այն դեպքերի ծախսերն ու օգուտները, երբ պահանջվում է ապահովել ԱՎԹ–ների շարունակական օգտագործումը:

ԱՎԹ–ների ձեռքբերման համար պահանջվող ծախսերի ամբողջ ծավալը հասկանալու համար, պետք է նկատի ունենալ ոչ միայն վաճառքի գինը (հաշվի առնելով պահանջվող կիրառությունների քանակը), այլև բոլոր մյուս ուղղակի և անուղղակի ծախսերը¹²: Ուղղակի մասնավոր ծախսերը ներառում են համապատասխան ԱՊՄ–ների ձեռքբերման և թունաքիմիկատն օգտագործողի համար հնարավոր ուղղակի առողջապահական ծախսերը, ներառյալ թունավորման դեպքում բժշկական ծախսերը և աշխատանքային ժամանակի կորուստը: Անուղղակի մասնավոր ծախսերը ներառում են քրոնիկական հիվանդությունների բուժման ծախսերը: Անուղղակի պետական ծախսերը ներառում են գյուղատնտեսական համայնքների և սպառողների երկարաժամկետ առողջապահական ծախսերը, ինչպես նաև ջրի աղտոտման և կենսաբազմազանության, ներառյալ փոշոտողների կորստի հետ կապված շրջակա միջավայրի ծախսերը¹³: ՎԴԻՊ–ը և ՅՓԴԻՊ–ը նպատակաուղղված են պետական ծախսերի նվազեցմանը: Կառավարությունները պատասխանատվություն են կրում երկարաժամկետ պետական ծախսերի և կարճաժամկետ մասնավոր շահույթների միջև հավասարակշռության ապահովման համար:

11. Ավելի պակաս վտանգավոր այլընտրանքները վերաբերում են ոչ միայն այլ միացություններին, այլև կարող են ներառել տարբեր (հաճախ ավելի թանկ) պատրաստուկային ձևեր, որոնք ավելի քիչ վտանգավոր են, ինչպիսիք են միկրոպարկուճված արտադրանքները կամ ջրում լուծվող փաթեթները, ինչպես նկարագրված է 4.1.3–ում:

12. Առավել մանրամասն տեղեկատվության համար տե՛ս Վնասատուների և թունաքիմիկատների կառավարման քաղաքականության մշակման ուղեցույցը (2010թ.) (Guidance on Pest and Pesticide Management Policy Development [2010]).

Մեկ այլ գործոն է մնացորդային քանակների ազդեցությունը բերքի արժեքի վրա: Առավել վտանգավոր թունաքիմիկատների մնացորդային քանակները գյուղմթերքները դարձնում են սպառման կամ արտահանման համար ոչ պիտանի, և, հետևաբար, առաջացնում են ռիսկեր ֆերմերների եկամտի համար: Ավելի թանկ, սակայն պակաս թունունակ արտադրանքները կարող են նվազեցնել այդ ռիսկը: ՎԴԻՊ-ի հետևողական կիրառումը կարող է նույնիսկ բարձրացնել գյուղմթերքի կամ դրա արտադրության գինը:

ԱՎԹ-ների հետ կապված ծախսերը սովորաբար ավելի ցածր են ներկայացվում, քանի որ բացակայում է տեղեկատվությունը մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա դրանց ազդեցության վերաբերյալ, ինչն էլ կարող է հանգեցնել պետական զգալի ծախսերի: Նույն կերպ, օգուտները գերազնահատվում են, քանի որ գոյություն ունի արդյունավետ այլընտրանքների մասին տեղեկատվության պակաս: ԱՎԹ-ների ծախսերի ողջ ծավալը հաշվարկելու համար անհրաժեշտ է գնահատել առողջապահական և բնապահպանական ծախսերը, մշակաբույսերի տնտեսական արժեքի վրա ազդեցությունը, այլընտրանքների առկայությունը և դրանց ծախսերն ու օգուտները: Վերլուծությունը պետք է ներառի ինչպես մասնավոր, այնպես էլ պետական ծախսերը:

4. ՄԵՂՍՈՒՄ

Այս բաժնում ներկայացված են ներկայումս օգտագործվող ԱՎԹ-ների և հնարավոր նոր ԱՎԹ-ների ռիսկերի մեղմման տարբերակները: Ինչպես նկարագրված է ստորև, ռիսկերի մեղմման հիմնական ուղղություններն են՝ պատրաստուկային ձևերի կամ դրանց օգտագործումների դադարեցումը, սահմանափակումը կամ փոփոխումը: Ամենահարմար տարբերակի ընտրությունը կարող է տարբեր լինել՝ կախված դեպքից և ռիսկի աստիճանից և կարիքներից, ինչպես նաև թունաքիմիկատների կառավարման ինստիտուցիոնալ ենթակառուցվածքների համապատասխանությունից և քաղաքականությունից:

4.1 Մեղմման տարբերակներ

Օգտագործման դադարեցում

Եթե ԱՎԹ-ները պարունակում են բարձր ռիսկեր, որոնք դժվար է նվազեցնել, բայց միևնույն ժամանակ առկա են արդյունավետ և պակաս վտանգավոր այլընտրանքներ, ապա այդպիսի ռիսկերի մեղմման ամենարդյունավետ տարբերակը կարգավորող գործողությունների միջոցով դրանց օգտագործման վերջնական դադարեցումն է: Սա կարելի է կատարել դրանք արգելելու կամ գրանցումը չեղարկելու, գրանցման ցուցակից հանելու կամ գրանցումը չերկարաձգելու միջոցով:

Արգելքը մարդու առողջության կամ շրջակա միջավայրի պահպանության նպատակով ազդող նյութի կամ արտադրանքի բոլոր տեսակի գործածություններն արգելելու վերջնական կարգավորող գործողությունն է: Այն սովորաբար կատարվում է ազդող նյութի նկատմամբ: Եթե ազդող նյութը կամ արտադրանքն արգելված է, այն չի կարող կրկին գրանցվել, եթե արգելքը չհանվի: Գրանցման չեղարկումը կամ գրանցումից հանելը նշանակում է արտադրանքի օգտագործման արգելում, սակայն չի բացառում հետագա նոր գրանցումները: Այս տարբերակը կարող է նախընտրելի լինել, եթե ցանկանում են թույլ տալ արտադրանքի ժամանակավոր օգտագործումն, օրինակ, այն դեպքում, երբ հիմնական այլընտրանքների առումով դիմադրության ինդիկատորներ ծագեն այն ժամանակ, երբ ընթացքի մեջ լինեն նոր այլընտրանքների վերաբերյալ հետազոտությունները:

Օգտագործման սահմանափակում

Եթե նվազ ռիսկեր պարունակող կենսունակ այլընտրանքները մատչելի չեն, ապա դրանց օգտագործումը դադարեցնելու փոխարեն կարգավորող որոշմամբ ցանկալի է սահմանափակել

13. ՄԱՇՄԾ-ի «Զիմիական նյութերի արդյունավետ կառավարման վերաբերյալ անգործության ծախսերը» զեկույցը [2013թ.] տրամադրում է վկայություններ քիմիական նյութերի կարգավորման գործում անգործության հետևանքով երկարաժամկետ պետական ծախսերի մեծության մասին (UNEP report “Costs of inaction on the sound management of chemicals [2013])

համապատասխան ԱՎԹ–ների օգտագործումը: Սահմանափակումները կարող են վերաբերել օգտագործողների տեսակներին (օրինակ՝ միայն հավաստագրված օգտագործողները, որոնք վերապատրաստվել են և ունեն համապատասխան ԱՊՄ–ներ և կիրառման սարքավորումներ), օգտագործման տարածքներին (օրինակ, ջրային մարմիններին ոչ մոտ գտնվող), գործածության տեսակին (օրինակ՝ սերմերի նախացանքային մշակում/ախտահանում/ կամ ցողունային սրսկում, ավիացիայի կամ ուսապարկային սրսկիչների միջոցով թունաքիմիկատների կիրառման արգելում և այլն) կամ մշակաբույսի տեսակին (միայն որոշակի մշակաբույսերի / վնասատուների համակցությունների համար՝ խիստ վերահսկողության իրականացման դեպքում): Գործնականում դա հաճախ լինում է այդ տեսակի սահմանափակումների համադրություն: Օրինակ, արտադրանքը կարող է թույլատրվել միայն որոշակի մշակաբույսի / վնասատուի համար և կիրառվել հավաստագրված օգտագործողի կողմից որոշակի ձևով:

Սահմանափակումը կարող է լինել խիստ, ինչը նշանակում է, որ թունաքիմիկատի գրեթե բոլոր տեսակի օգտագործումները, մարդու առողջության կամ շրջակա միջավայրի պահպանության նպատակով, արգելվում են կարգավորող գործողություններով, չնայած, այնուամենայնիվ, գործածության որոշակի կոնկրետ տեսակներ մնում են թույլատրելի:

Սահմանափակումների արդյունավետությունը մեծապես կախված է դրանց կիրարկման կարողությունից: Սահմանափակումը, հետևաբար, կարող է դառնալ սակավ կենսունակ տարբերակ, եթե կիրարկման կարողությունները թույլ են:

Պատրաստուկային ձևերի, փաթեթավորման կամ օգտագործման փոփոխություններ

Պատրաստուկային ձևերի, փաթեթավորման կամ կիրառման փոփոխությունը կարող է դիտարկվել արտադրողի կամ կարգավորողի մակարդակով: Վտանգավորության կամ ազդեցության ռիսկը կարելի է նվազեցնել պատրաստուկային ձևերի կամ փաթեթավորման մեջ փոփոխություն մտցնելու ճանապարհով: Պատրաստուկային ձևերի փոփոխություն, օրինակ, կարող է ներառել ավելի ցածր խտությունների կամ կիրառման տարբեր մեթոդների համար տարբեր պատրաստուկային ձևերի օգտագործումը: Որպես օրինակ, կարելի է նշել ոչ արմատային սրսկումների, սփռելիների (ցողաշիթերի) փոխարինումը հատիկավորված նյութերով կամ սերմերի ծածկույթներով, սուր թունունակությունը նվազեցնող միկրոպատիճավորված պատրաստուկային ձևերը, ջրում լուծելի փաթեթները՝ խուսափելու համար խառնուրդի պատրաստման ժամանակ փոշենման կամ հեղուկ կոնցենտրատների հետ աշխատելուց, արտադրանքը պակաս վտանգավոր դարձնելու նպատակով օժանդակ նյութերի /համագործիչների/ ավելացումը և այլն: Փաթեթավորման մեջ փոփոխություն մտցնելը կարող է ներառել փաթեթի չափսերի փոքրացումը՝ պահեստավորման կամ փաթեթավորման դիզայնից խուսափելու նպատակով, ինչն էլ նվազեցնում է ռիսկը խառնուրդի պատրաստման ժամանակ:

Սովորաբար արտադրողի կողմից իրականացվող այդպիսի փոփոխությունները պահանջում են գրանցման մեջ փոփոխությունների մտցում: Նույն կերպ, գրանցման մարմինները կարող են չեղարկել կամ գրանցումից հանել որոշակի պատրաստուկային ձևեր՝ օգտագործման համար թույլատրելի արտադրանքների տեսակը փոփոխելու նպատակով: Այս կերպ նվազ ռիսկեր պարունակող որոշակի ազդող նյութով պատրաստուկային ձևեր կարող են պահպանվել, մինչդեռ միևնույն ազդող նյութի այլ ավելի բարձր ռիսկեր պարունակող պատրաստուկային ձևերի օգտագործումը կարող է դադարեցվել: Նույնը վերաբերում է գրանցման փոփոխություններին՝ փոխելու համար այն նպատակները, որոնց համար արտադրանքը գրանցված է կամ այն պայմանները, որոնցում դրանք կարող են օգտագործվել:

Օրենսդրական կամ վարչական միջոցառումներ

Կանոնակարգային միջոցառումներից բացի, կարելի է ձեռնարկել օրենսդրական կամ վարչական միջոցառումներ, որոնք կարող են ուղղակիորեն կամ անուղղակիորեն նվազեցնել թունաքիմիկատների ռիսկերը: Օգտագործողները կարող են իրազեկության բարձրացման, վերապատրաստման կամ խթանման սխեմաների շնորհիվ փոխել իրենց գործելակերպը:

Վնասատուների կայուն կառավարման բարելավմանն ուղղված օրենսդրական կամ վարչական միջոցառումների նվազ ռիսկեր պարունակող օրինակներ՝

- խթանել ՎԴԻՊ և ՀՓԴԻՊ մոտեցումները՝ ուսուցման, տեղեկատվության տարածման և հետագա հետազոտությունների մեջ ներդրումների կատարման և դրանց արդյունավետության մշտադիտարկման միջոցով,
- բարելավել ցածր ռիսկեր պարունակող կենսաբանական այլընտրանքների մատչելիությունը և տարածումը.
- օգտագործել գյուղատնտեսական լավագույն փորձը և կարգավորման հետ կապ չունեցող տարբերակները՝ խթանելու համար ԱՎԹ-ների փոխարինումը վնասատուների դեմ պայքարի մեթոդներով և արտադրանքներով, որոնք ավելի քիչ ռիսկեր են առաջացնում,
- հաշվի առնել ֆինանսական խթանների (օրինակ, սուբսիդավորման կամ հարկման գործիքներ) օգտագործումը՝ բարձր ռիսկեր պարունակող արտադրանքների փոխարեն ցածր ռիսկեր պարունակող արտադրանքների օգտագործումը խթանելու համար, ինչպիսիք են կենսաբանական պայքարի միջոցները և բիոթունաքիմիկատների մեծ մասը:

Թունաքիմիկատների պատշաճ օգտագործմանն ու հեռացմանը նպաստող միջոցառումների օրինակներ

- Ապահովել թունաքիմիկատների մանրածախ առևտրով զբաղվողների և օգտագործողների համար թունաքիմիկատների պատշաճ ընտրության և օգտագործման վերաբերյալ վերապատրաստման ծրագրեր: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ թունաքիմիկատների պատշաճ օգտագործման վերաբերյալ ֆերմերների վերապատրաստման երկարաժամկետ հետևանքները կարող են լինել սահմանափակ¹⁴: Մարդիկ չպետք է ապավինեն նման վերապատրաստմանը՝ որպես մեղմման միջոցի, առանց դրա ազդեցության մանրակրկիտ մշտադիտարկման: Պետք է հաշվի առնել թունաքիմիկատի ռիսկի նվազեցման երեք քայլերի հիերարխիան /ստորակարգությունը/ (ներդիր 4):
- Ապահովել համապատասխան ԱՊՄ-ների և կիրառման սարքավորումների առկայությունը և աջակցել կիրառման նոր տեխնոլոգիաների մշակմանը և ներդրմանը, որոնք ավելի քիչ ռիսկ են առաջացնում
- Մշակել սխեմաներ, որոնց միջոցով թունաքիմիկատները հասանելի կլինեն միայն բույսերի պաշտպանության պատասխանատուի դեղատոմսով
- Խրախուսել թունաքիմիկատների կիրառման մասնագիտական ծառայությունների զարգացումը՝ անհատ ֆերմերների կողմից թունաքիմիկատների կիրառումը կանխելու համար: Նման համակարգերը կարող են նախատեսել երաշխիքներ անհարկի կիրառությունների դեմ:
- Ներդնել ընթացակարգեր՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության սահմանափակման համար (օրինակ, կիրառման ժամկետներ, բուֆերային գոտիներ և այլն)
- Համագործակցել արդյունաբերության հետ՝ դատարկ տարաների/կոնտեյներների և, անհրաժեշտության դեպքում, ԱՎԹ-ների ժամկետանց պաշարների հեռացման ծրագրեր մշակելու համար:

Թունաքիմիկատների նկատմամբ նորմատիվային հսկողության ուժեղացման օրենսդրական միջոցառումների օրինակներ, որոնք կօգնեն կանխարգելել ԱՎԹ-ների հետ կապված խնդիրները՝

- ուժեղացնել թունաքիմիկատների մասին օրենսդրությունը և / կամ ապահովել դրա արդյունավետ իրականացումը և կիրարկումը,
- ուժեղացնել թունաքիմիկատների գրանցման գործընթացը՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով թունաքիմիկատների գրանցման ժամանակ ռիսկերի գնահատմանը (այս առումով օգտակար կարող է լինել ՊԳԿ –ի «Թունաքիմիկատների գրանցման գործիքակազմ»-ի հավելված II-ը),
- սահմանել, վերահսկել և կիրարկել առավելագույն մնացորդային քանակները, ինստիտուցիոնալացնել թունաքիմիկատների օգտագործման և դրա հետ կապված առողջապահական և բնապահպանական ասպեկտների նկատմամբ մշտադիտարկումը,
- ընդլայնել տեղեկատվության փոխանակումն այլ երկրների հետ՝ թունաքիմիկատների հետ կապված դեպքերի, ձեռնարկված օրենսդրական միջոցառումների, ԱՎԹ-ների այլընտրանքների վերաբերյալ փորձառության և այլ գործողությունների մասին:

Վերը նշված կետերի մեծամասնության համար գոյություն ունի հատուկ ուղեցույց, որը հասանելի է ՊԳԿ-ի վնասատուների և թունաքիմիկատների կառավարման վերաբերյալ ինտերնետային էջերից

14. ՄԱՀՄԾ-ի «Զիմիական նյութերի արդյունավետ կառավարման վերաբերյալ անգործության ծախսերը» զեկույցը [2013թ.] տրամադրում է վկայություններ քիմիական նյութերի կարգավորման գործում անգործության հետևանքով երկարաժամկետ պետական ծախսերի մեծության մասին (UNEP report “Costs of inaction on the sound management of chemicals [2013])

(<http://www.fao.org/agriculture/crops/thematic-sitemap/theme/pests/code/list-guide-new/en/>):

Ազդող կյուլթի կամ պատրաստուկային ձևի օգտագործման դադարեցում

Ազդող կյուլթի օգտագործման արգելքին կամ արտադրանքի գրանցման չեղարկմանը սովորաբար հետևում է դրա վաճառքի և օգտագործման փուլ առ փուլ դադարեցման գործընթացը, որը հնարավորություն է տալիս ներդնել այլընտրանքներ և սպառել պաշարները՝ ժամկետանց արտադրանքների պաշարների կուտակումը կանխելու համար: Քայլերը սովորաբար ներառում են՝

1. արտադրության և ներմուծման դադարեցումը,
2. բաշխման և վաճառքի դադարեցումը,
3. օգտագործման դադարեցումը:

Այնուամենայնիվ, անմիջական արգելքը կամ չեղարկումը կարող է դիտարկվել հազվադեպ դեպքերում, երբ առկա է թարմ տեղեկատվություն առ այն, որ գոյություն ունի անթույլատրելի ռիսկ, որին անհրաժեշտ է անմիջապես արձագանքել: Նման դեպքերում պետք է ձեռնարկել միջոցառումներ՝ մնացած պաշարների հետ կանչման, հավաքման և հեռացման համար:

Լայն տարածում ունի այն գործելակերպը, ըստ որի թունաքիմիկատից աստիճանաբար հրաժարվելու գործընթացի մասին հայտարարվում է արգելքի մասին հայտարարություն անելուց հետո: Սա պետք է ներառի վաճառքից և գործածությունից փուլային հրաժարման համար նախատեսված ժամանակահատվածները: Այս ժամանակահատվածները պետք է բավարար լինեն արտադրողների և ներմուծողների մոտ եղած քանակները հեռացնելու համար՝ նախքան բաշխման և վաճառքի դադարեցումը և հեռացնել մանրածախ առևտրի կետերում բոլոր պահեստավորված քանակները՝ նախքան դրանց օգտագործման դադարեցումը: Այդ ժամանակահատվածները նաև պետք է օգտագործվեն՝ ֆերմերներին այլընտրանքների մասին իրազեկելու համար: Թունաքիմիկատից հրաժարվելու փուլային գործընթացի ժամանակ ռիսկի նվազեցման համար կարող է առաջանալ ռիսկի նվազեցմանն ուղղված հատուկ միջոցառումների իրականացման պահանջ: Սա կարող է, օրինակի համար, ներառել թունաքիմիկատի օգտագործման սահմանափակումները: Նման պարագայում կարևոր է արդյունավետ հաղորդակցման մեխանիզմի առկայությունը՝ ներմուծողներին, մատակարարներին և օգտագործողներին տեղեկացնելու համար: Փուլային գործընթացի ժամանակ ռիսկի նվազեցման հատուկ միջոցառումների մասին օգտագործողներին իրազեկելու համար կարող են պահանջվել որոշակի ջանքեր: Տեսչական ստուգումներն անհրաժեշտ են՝ համապատասխանության վերահսկման և ապօրինի ներկրումը կանխելու համար:

4.2 Մեղման տարբերակի ընտրություն

Այն բանից հետո, երբ տվյալ երկրում առկա է որոշակի ԱՎԹ-ի վերաբերյալ ռիսկերի և կարիքների համապատասխան պատկերը, հաջորդ քայլը պետք է լինի այդ արտադրանքի օգտագործման և ռիսկերի մեղմման միջոցառումների առավելությունների ու թերությունների դիտարկումը: Նման նկատառումները կարող են լինել տարբեր՝ յուրաքանչյուր արտադրանքի և յուրաքանչյուր օգտագործման իրավիճակի համար և, հետևաբար, գնահատումը պետք է կատարել յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար: Որոշ դեպքերում հնարավոր է, որ կարիք լինի միևնույն արտադրանքի տարբեր օգտագործումները քննարկել առանձին:

Մեղմման տարբերակն ընտրելիս պետք է ուշադրություն դարձնել առաջարկվող տարբերակի գործնականության և արդյունավետության վրա, քանի որ դրանցից որոշները կարող են ավելի քիչ կիրառելի լինել տվյալ երկրում օգտագործման պայմաններում: ՊԳԿ-ի «Թունաքիմիկատների գրանցման գործքակազմ»-ը (<http://www.fao.org/pesticide-registration-toolkit/tool>) տրամադրում է մեղմման միջոցառումների արդյունավետության որոշման չափանիշների օգտակար օրինակներ:

Որոշ հարցեր և գործոններ, որոնք պետք է հաշվի առնել.

1. Արդյո՞ք նույնականացված առավել վտանգավոր թունաքիմիկատը դեռևս գործածության մեջ է: Որոշ երկրներում հնարավոր է, որ որոշակի ԱՎԹ-ներ մնան գրանցված՝ չնայած դրանց բավական ժամանակ ոչ մատչելի և չօգտագործված լինելուն: Եթե այդպիսի արտադրանքների կարիքն այլևս չկա, ապա գրանցման ցուցակում դրանց պահելու որևէ հիմք չի կարող լինել:

Այնուամենայնիվ, որոշ առանձնահատուկ դեպքերում կարող է ցանկալի լինել պահպանել ավելի ուշ ժամանակներում տվյալ արտադրանքի օգտագործման տարբերակը, եթե ստեղծվի այնպիսի հատուկ իրավիճակ, որի դեպքում անհրաժեշտ կհամարվի դրա օգտագործումը: Նման դեպքերում օգտագործման դադարեցման փոխարեն՝ կարող է նախապատվություն տրվել սահմանափակմանը:

2. Ինչու՞ է մտահոգություն առաջացնող արտադրանքը որակվում որպես առավել վտանգավոր թունաքիմիկատ: Այն դեպքերում, երբ թունաքիմիկատները որակվում են որպես ԱՎԹ–ներ, քանի որ դրանց ազդող նյութն ընդգրկված է Ստոկհոլմի կոնվենցիայում կամ Մոնրեալի արձանագրությունում, գոյություն ունի ռիսկի կրճատման միջազգային պարտավորություն՝ դրա օգտագործումը բացառելու միջոցով, եթե տվյալ երկիրը հանդիսանում է Կողմ երկիր:

3. Երկիրը սահմանե՞լ է արդյոք չափանիշներ կամ քաղաքականություն առ այն, թե ինչն է համարում անընդունելի ռիսկ: Թունաքիմիկատների, առողջության, շրջակա միջավայրի կամ աշխատանքային օրենսդրություններում կարող են առկա լինել դրույթներ, որոնք ապահովում են նման չափանիշներ: Որոշ երկրներ, օրինակ, կարող են քաղցկեղածին (քաղցկեղ առաջացնող), մուտագեն (գեներին վնաս հասցնող) կամ տերատոգեն (սաղմի կամ պտղի զարգացումը խաթարող) արտադրանքների ցանկացած ազդեցություն դիտարկել որպես անթույլատրելի և դրանք դիտարկել որպես «վտանգավորության շեմային չափանիշներ», ինչը նշանակում է, որ դրանք ոչնչացվում են իրենց բնորոշ վտանգավոր հատկանիշներից ելնելով, և հետագա ռիսկի գնահատում չի պահանջվում: Այն երկրներին, որոնք չունեն անթույլատրելի ռիսկի համար չափանիշներ, առաջարկվում է սահմանել պաշտպանության ոլորտում նպատակներ և համապատասխան անթույլատրելի ռիսկի վերաբերյալ չափանիշներ՝ ելնելով երկրի առանձնահատուկ պահանջներից և տեղական իրավիճակից: Այս կապակցությամբ որպես կողմնորոշիչ օգտակար կարող է լինել ՊԳԿ–ի «Թունաքիմիկատների գրանցման գործիքակազմ»–ը (հավելված II):

4. Ի՞նչ չափով են ԱՎԹ–ները կիրառվում, ովքե՞ր են օգտագործում, որո՞նք են օգտագործման ընթացիկ գործելակերպերը և արդյո՞ք կարճաժամկետ հեռանկարում հնարավոր են բարեփոխումներ ամբողջ երկրում: Եթե ամբողջ երկրում օգտագործողների լայն խմբերի կողմից կարճ ժամանակահատվածում ռիսկերի կրճատումն ազդեցության կրճատման միջոցով դիտարկվում է որպես անհրաժեշտ, ապա դա կարող է սահմանափակել ԱՎԹ–ների գրանցման չեղարկմանը կամ սահմանափակմանն ուղղված մեղմման տարբերակների ընտրությունը: Շատ երկրների համար որպես նպատակ կարող է լինել ԱՎԹ–ների օգտագործումից փոխարին հրաժարումն այն օգտագործողների կողմից, որոնք չեն կարողանում այդ արտադրանքները տնօրինել թույլատրելի ռիսկի սահմաններում:

5. Կա՞ն արդյոք ավելի պակաս վտանգավոր այլընտրանքներ, որոնք արդյունավետորեն պայքարում են վնասատուների դեմ և նաև ծախսարդյունավետ են: Հնարավոր արդյունքներից մեկը կարող է լինել ԱՎԹ–ների գրանցման չեղարկումը, եթե առկա են արդյունավետ, պակաս վտանգավոր այլընտրանքներ: Այն կարող է նաև հանգեցնել որոշակի ԱՎԹ–ների անհրաժեշտության պահպանմանը, քանի որ դրանք ապահովում են որոշակի օգուտներ, եթե համապատասխան այլընտրանքները դեռևս առկա չեն: Վերջին դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել սահմանափակումները և ռիսկի մեղմման խիստ միջոցառումները: Բացի այդ, կարող են նախաձեռնվել այլընտրանքների նույնականացման և իրականացման ուղղությամբ հատուկ հետազոտություններ կամ քաղաքականություն: Սա կարող է ներառել խթաններ, որոնք խրախուսում են այլընտրանքների մշակումը:

5. ԾՐԱԳՐՈՒՄ

5.1 Գործողությունների ծրագրի մշակում

ԱՎԹ–ների հիմնախնդրի լուծմանն ուղղված գործողությունները կարելի է լավագույնս բարելավել՝ մշակելով գործողությունների ծրագիր, որը ներառում է վերը նկարագրված և ստորև ամփոփված հիմնական քայլերը՝

- որոշել, թե գրանցված որ թունաքիմիկատները պետք է համարվեն ԱՎԹ– ներ,
- ամփոփել այդ ԱՎԹ–ների ներկայիս օգտագործման արդյունքները և դրանց օգտագործման պատճառները,
- որոշել, թե որքանով են դրանք իրականում անհրաժեշտ (հաշվի առնելով հնարավոր այլընտրանքների առկայությունը),
- որոշել ռիսկերը՝ հաշվի առնելով օգտագործման պայմանները,
- ընտրել և իրականացնել մեղմման միջոցառումներ,
- մշտադիտարկել և վերանայել մեղմման միջոցառումների արդյունավետությունը:

Ավելին, գործողությունների ծրագիրը պետք է՝

- որոշի հիմնական դերակատարներին և այլ շահագրգիռ կողմերին (ովքե՞ր),
- սահմանի առաջադրանքները և պարտականությունները (հ՞նչ),
- սահմանի իրականացման ժամկետը (ե՞րբ),
- ստեղծի համակարգող մեխանիզմ, որը կարող է, օրինակ, ներգրավել միջգերատեսչական աշխատանքային խմբին և / կամ շահագրգիռ կողմերի հարթակը,
- մշակի տեղեկատվության տարածման և հաղորդակցման ռազմավարություն:

ԱՎԹ–ների հիմնախնդրի լուծմանն ուղղված այս քայլերից բացի, գործողությունների ծրագիրը, վնասատուների դեմ պայքարի և թունաքիմիկատների կառավարման ուժեղացման նպատակով, կարող է նաև ավելի լայն միջամտություններ դիտարկել՝ ինչպես թվարկված են քաղաքականության և վարչական միջոցառումների ներքո: Նման միջոցառումները կօգնեն կանխել ԱՎԹ–ների հետ կապված հետագա խնդիրների առաջացումը:

5.2 Հաղորդակցություն և շահագրգիռ կողմերի ներգրավվածություն

Արդյունավետ հաղորդակցությունը կարևոր է՝ թունաքիմիկատների հետ կապված ռիսկերի և մեղմման միջոցառումների, ներառյալ գյուղատնտեսական թունաքիմիկատների այլընտրանքների վերաբերյալ իրազեկության բարձրացման համար: Սա պետք է ուղղված լինի ոչ միայն երկրագործներին, այլև սննդամթերքի մանրածախ առևտրականներին և սպառողներին, որպեսզի նրանք կարողանան գիտակցված ընտրություն կատարել:

Դաշտային պայմաններում օգտագործման պայմաններում ԱՎԹ–ների հետ կապված հարցերի բացահայտումը, դրանց վերաբերյալ հաշվետվողականությունը և հաղորդակցությունը կարևոր են՝ հարցերի և ապրանքների վերաբերյալ պատկերացում կազմելու համար, որոնց վրա պետք է ուշադրություն դարձնեն օրենսդիրները և քաղաքականություն մշակողները: Օրենսդիրները կարող են ցանկություն ունենալ քննարկել դեպքերի, այդ թվում թունաքիմիկատների հետ կապված դեպքերի մասին հաշվետվության ներկայացման հատուկ սխեմաների կամ մեխանիզմների տրամադրման հարցը:

Հաղորդակցությունը նաև կարևոր է՝ թունաքիմիկատների մատակարարման շղթայի բոլոր ընկերություններին փոփոխությունների համար նախապատրաստելու տեսանկյունից, եթե կատարվելու են ԱՎԹ–ների վերաբերյալ նորմատիվ իրավական կամ այլ փոփոխություններ, որոնք կարող են ներառել ռիսկի մեղմման նպատակով գրացման չեղարկումը կամ օգտագործման մեջ փոփոխությունները:

Հաղորդակցությունը պետք է լինի հստակ և արժանահավատ, և, հետևաբար, տեղեկատվությունը պետք է լինի ճշգրիտ և համարժեք: Դա ապահովելու համար, երկրները կարող են ցանկություն ունենալ մշակել ԱՎԹ-ների հետ կապված հաղորդակցության առանձնահատուկ ռազմավարություն¹⁵:

Թունաքիմիկատների կառավարման վերաբերյալ վարքագծի կանոնագրքում տեղեկատվության տարածմանն առնչվող հոդվածները

Կառավարությունները և թունաքիմիկատների արդյունաբերությունը պետք է համագործակցեն ռիսկերի հետագա սվազեցման հարցում (հոդված 5.3.5) թունաքիմիկատների հնարավոր բացասական հետևանքներից առողջության և շրջակա միջավայրի պահպանության կարևորության և պահպանման եղանակների մասին թունաքիմիկատներ օգտագործողների շրջանում իրազեկության բարձրացման և հասկացողության ընդլայնման միջոցով:

Հոդված 5.4. Ընկերությունները, որոնք վրա տարածվում են վարքագծի կանոնագրքի գործողությունները, պետք է քննարկեն առկա բոլոր փաստերը և խթանեն թունաքիմիկատների և դրանց օգտագործման, ռիսկերի և այլընտրանքների մասին պատասխանատու տեղեկատվության տարածումը:

Բացի այդ, գոյություն ունեն միջազգային հաղորդակցման պահանջներ Ռոտերդամի կոնվենցիայի Կողմերի համար, որոնք առողջապահական կամ բնապահպանական նկատառումներով, պետք է հաղորդեն օրենսդրական միջոցառումների և լուրջ դեպքերի մասին:

Շահագրգիռ կողմերի լայն ներգրավվածությունն ԱՎԹ-ների պահանջարկի և ռիսկի վերանայման գործում կնպաստի հավասարակշռված որոշումների կայացմանը: Կարիքների գնահատման գործընթացում երկրագործների, հետազոտողների, մատակարարների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներգրավումը կարող է օգնել գտնելու կենսունակ այլընտրանքներ կամ ռիսկերի մեղմման այլ միջոցառումներ, եթե կենսունակ այլընտրանքները դեռևս առկա չեն: Հանրային առողջապահությունում օգտագործվող թունաքիմիկատների դեպքում, նման վերլուծություններում պետք է ներգրավված լինեն համաճարակաբանները:

15. Օգտակար ուղեցույցներ են տրամադրում S324-ն՝ Ուղեցուցային փաստաթուղթ քիմիկատների հետ կապված ռիսկերի կառավարման ոլորտում ռիսկերի վերաբերյալ տեղեկատվության հաղորդման մասին, 2002թ. (Guidance document on risk communication for chemical risk management [OECD 2002]) և Քիմիական նյութերի եվրոպական գործակալությունը (ԷԼԵԳ)՝ Քիմիական նյութերի ռիսկերի և անվտանգ օգտագործման վերաբերյալ տեղեկատվության հաղորդման մասին ուղեցույց, 2010թ. (Guidance on the communication of information on the risks and safe use of chemicals [ECHA 2010])

6. ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

6.1 Գրանցում

ԱՎԹ-ների հետ կապված հետագա խնդիրների կանխման համար, կարող է առաջ գալ թունաքիմիկատների գրանցման համակարգի վերանայման պահանջ: Սա կարող է ներառել՝

- թունաքիմիկատների մասին օրենսդրությունում պաշտպանության ոլորտում նպատակների և անթույլատրելի ռիսկերի սահմանումը,
- գրանցման, մասնավորապես, ռիսկի գնահատման ընթացակարգերի ուժեղացումը,
- ԱՎԹ-ների վերաբերյալ չափանիշների հիման վրա գրանցման նկատառումների ավելացումը: Սա կարող է, օրինակ, ներառել ԳՆՀ I դասին պատկանող արտադրանքների չգրանցումը կամ սահմանափակումների կամ հաստատման պայմանների ավելացումը, որոնք երաշխավորում են, որ այն արտադրանքները, որոնց տնօրինման և կիրառման համար պահանջվում են ԱՊՄ-ների օգտագործում, որոնք հարմարավետ չեն, թանկ են կամ դժվար մատչելի, հասանելի չեն տաք կլիմայական պայմաններում փոքր ծավալներով օգտագործողների և ֆերմերային տնտեսություններում աշխատողների համար,
- գրանցված թունաքիմիկատների պարբերական վերանայման պահանջը և գրանցման վերանայման նախաձեռնությունն այնտեղ, որտեղ մշտադիտարկումը, դաշտային հսկողությունը, նոր գիտական տեղեկությունները կամ համադրելի երկրներից ստացվող նոր տեղեկությունները վկայում են բարձր ռիսկերի մասին, օրինակ՝ համեմատաբար մեծ թվով բացասական ազդեցության դեպքերի պատճառով,
- ակտիվորեն հանդես գալ այն արտադրանքների գրանցման օգտին, որոնք ավելի քիչ ռիսկ են պարունակում, երբ այդպիսի այլընտրանքները կենսունակ են և մատչելի: Այս առումով պետք է հատուկ ուշադրություն դարձնել կենսաբանական պայքարի խրախուսմանը:

Թունաքիմիկատների գրանցման գործընթացի բարելավման վերաբերյալ հետագա հանձնարարականների համար հղում է կատարվում ՊԳԿ/ԱՅԿ –ի «Թունաքիմիկատների գրանցման վերաբերյալ ուղեցույց»–ին (2010թ.) և ՊԳԿ–ի «Թունաքիմիկատների գրանցման գործիքակազմ»–ին (հավելված II):

6.2 Կիրարկում

Թունաքիմիկատների օրենսդրության կիրարկումը կարող է ուժեղացման կարիք ունենալ՝ անօրինական արտադրության, ներմուծման, առևտրի և օգտագործման կանխարգելման համար: Եթե գրանցման ցուցակից հանումը կամ սահմանափակումները օգտագործվում են որպես մեղմման միջոց, ապա համապատասխանությունն ապահովելու համար պետք է լինի արդյունավետ մշտադիտարկման և կիրառման համակարգ: «Թունաքիմիկատները կարգավորող ծրագրի համապատասխանության և կիրարկման ուղեցույց»–ն [2006թ.]

(http://www.fao.org/fileadmin/templates/agphome/documents/Pests_Pesticides/Code/Compliance.pdf) ապահովում է լրացուցիչ խորհրդատվություն:

6.3 Ուսուցում

Թունաքիմիկատների մանրածախ առևտրականների և թունաքիմիկատներ օգտագործողների համար արտադրանքի ճիշտ ընտրության և պատշաճ օգտագործման, այդ թվում՝ անհատական պաշտպանության միջոցների օգտագործման վերաբերյալ լայնածավալ վերապատրաստման ծրագրերը կօգնեն նվազեցնել ռիսկերը: Հատկապես կարևորվում են ՎԴԻՊ-ի և ՀՓԴԻՊ-ի թեմաներով վերապատրաստումը կամ վնասատուների դեմ պայքարի այլ ազդող-էկոլոգիական մոտեցումները, որոնք նվազեցնում են թունաքիմիկատներից կախվածությունը:

6.4 Հսկողություն

Պետք է ստեղծվեն հսկողության համակարգեր՝ ԱՎԹ–ների օգտագործման և ռիսկերի մեղմման միջոցառումների արդյունավետության վերահսկման համար: Նման մշտադիտարկման համակարգերի ստեղծման վերաբերյալ ուղեցույցը ներկայացված է ԱՀԿ/ՊԳԿ-ի «Թունաքիմիկատների ազդեցության հետևանքով առաջացող առողջապահական և բնապահպանական ռիսկերի վերաբերյալ հաշվետվական համակարգի մշակման ուղեցույց»–ում [2009թ.] (http://www.fao.org/fileadmin/templates/agphome/documents/Pests_Pesticides/Code/Incidentreporting09.pdf):

Մշտադիտարկման և հաշվետվության ներկայացման մեջ դերակատարում ունեցող ընկերությունները ներառում են՝ գյուղատնտեսության աջակցման կենտրոնի անձնակազմը, ապակենտրոնացված մշակաբույսերի պաշտպանության աշխատակիցները, գյուղական համայնքների հետ աշխատող հասարակական կազմակերպությունները, հիվանդություններ փոխանցողների դեմ ինտեգրված պայքարի ծրագրի աշխատակիցները, գյուղական բուժկետերը և մարզային հիվանդանոցները և այլն: Եթե ընտրված ռիսկի մեղմման միջոցառման արդյունավետությունը դիտարկվում է անբավարար, ապա պետք է քննարկել/հաշվի առնել այլ մեղմման միջոցառումներ: Սա հատկապես այն դեպքն է, երբ ընտրված են լինում վարչական կամ քաղաքականության վրա հիմնված մեղմման միջոցառումներ, ինչպիսիք են, օրինակ, պատշաճ օգտագործման վերաբերյալ ուսուցումը: Որոշ դեպքերում, երբ նոր, պակաս վտանգավոր արտադրանքները ներդրվում են որպես այլընտրանքներ, բույսերի պաշտպանության աշխատակիցները նույնպես կարող են վերահսկել դրանց արդյունավետությունը:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Նյութեր

ՊԳԿ-ի նպատակն է հասանելի դարձնել այն գործիքները, որոնք կօժանդակեն սույն ուղեցույցի իրականացմանը: Դրանք կտեղադրվեն տեխնիկական ուղեցույցների վերաբերյալ ՊԳԿ-ի ինտերնետային էջում՝ որպես օժանդակություն վարքագծի կանոնագրքին:

Նախատեսված գործիքները ներառում են՝

- I. ՊԳԿ-ի «Թունաքիմիկատների գրանցման գործիքակազմ» ռիսկերի գնահատման վերաբերյալ ուղեցույցը
- II. ԱՎԹ-ների նույնականացման համար հիմնական աղբյուրները
- III. ԱՎԹ-ներից փուլային հրաժարման դեպքերի թեմատիկ ուսումնասիրությունները

Հիմնական տեղեկատվական աղբյուրները

ՔՆԵԳ [2010թ.], Զիմիական նյութերի ռիսկերի և անվտանգ օգտագործման վերաբերյալ տեղեկատվության հաղորդման ուղեցույց՝

https://echa.europa.eu/documents/10162/13639/risk_communications_en.pdf

ՊԳԿ/ԱՅԿ [2015թ.], Թունաքիմիկատների օրենսդրության վերաբերյալ ուղեցույց (<https://www.fao.org/3/a-i5008e.pdf>), ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն և Առողջապահության համաշխարհային կազմակերպություն

ՊԳԿ/ԱՅԿ [2013թ.], Թունաքիմիկատների կառավարման վարքագծի միջազգային կանոնագիրը (<http://www.fao.org/docrep/meeting/027/mg095e.pdf>), (Թունաքիմիկատների բաշխման և օգտագործման նախկին վարքագծի կանոնագրքի վերանայում), ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն և Առողջապահության համաշխարհային կազմակերպություն

ՊԳԿ [2010թ.], Վնասատուների դեմ պայքարի և թունաքիմիկատների կառավարման քաղաքականության մշակման ուղեցույց (http://www.fao.org/fileadmin/templates/agphome/documents/Pests_Pesticides/Code/Policy_2010.pdf), ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն

ՊԳԿ/ԱՅԿ [2010թ.], Թունաքիմիկատների գրանցման վերաբերյալ ուղեցույց (http://www.fao.org/fileadmin/templates/agphome/documents/Pests_Pesticides/Code/Registration_2010.pdf), ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն և Առողջապահության համաշխարհային կազմակերպություն

ՊԳԿ/ԱՅԿ [2009թ.], Թունաքիմիկատների ազդեցության հետևանքով առաջացած առողջապահական և բնապահպանական դեպքերի մասին հաշվետվական համակարգի մշակման ուղեցույց (<http://www.fao.org/agriculture/crops/thematic-sitemap/theme/pests/code/list-guide-new/en/>), ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն և Առողջապահության համաշխարհային կազմակերպություն

ՊԳԿ/ԱՅԿ [2008թ.], Թունաքիմիկատների կառավարման վերաբերյալ ՊԳԿ/ԱՅԿ 2-րդ համատեղ հանդիպման մասին զեկույց (http://www.fao.org/fileadmin/templates/agphome/documents/Pests_Pesticides/Code/Report.pdf) (որը սահմանել է ԱՎԹ-ի համար չափանիշները)

ԳՆՅ [2015թ.], Զիմիական կյուրթերի դասակարգման և պիտակավորման գլոբալ ներդաշնակեցման համակարգ (GHS) (http://www.unece.org/fileadmin/DAM/trans/danger/publi/ghs/ghs_rev06/English/03e_part3.pdf), 6–րդ վերանայված հրատարակություն, մաս 3. առողջապահական վտանգներ, Միավորված ազգերի կազմակերպություն, Նյու Յորք և Ժնև

ՏՅՁԿ [2002թ.], ՏՅՁԿ–ի ուղեցուցային փաստաթուղթը քիմիկատների հետ կապված ռիսկերի կառավարման ոլորտում ռիսկերի վերաբերյալ տեղեկատվության հաղորդման մասին (<http://www.oecd.org/officialdocuments/publicdisplaydocumentpdf/?cote=env/jm/mono%282002%2918&doclanguage=en>), Փարիզ, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն

ՄԱՇՄԾ [2013թ.], Զիմիական կյուրթերի արդյունավետ կառավարման հարցում անգործության գինը (http://www.unep.org/hazardoussubstances/Portals/9/Mainstreaming/CostOfInaction/Report_Cost_of_Inaction_Feb2013.pdf), Միավորված ազգերի Շրջակա միջավայրի ծրագիր, Ժնև [2013թ.–ի հոկտեմբերի տվյալներ]

ՄԱՇՄԾ [2013թ.], «Կայուն օրգանական ադոտոիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիա (<http://chm.pops.int/>)

ՄԱՇՄԾ/ՊԳԿ [2013թ.], «Միջազգային առևտրում առանձին վտանգավոր քիմիական կյուրթերի և պեստիցիդների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի մասին» Ռոտերդամի կոնվենցիա

ԱՅԿ [2010թ.], Թունաքիմիկատների դասակարգումն ըստ վտանգավորության աստիճանի և դասակարգման ուղեցույցը, 2009թ., Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, Ժնև

Սույն փաստաթղթում տեղադրված հիպերհղումների ցանկը

ՊԳԿ –ի վեբէջերը վնասատուների և թունաքիմիկատների կառավարման վերաբերյալ	http://www.fao.org/agriculture/crops/thematic-sitemap/theme/pests/code/list-guide-new/en/
ՊԳԿ/ԱՅԿ, Թունաքիմիկատների կառավարման վարքագծի միջազգային կանոնագիրք, [2013թ.]	http://www.fao.org/docrep/meeting/027/mg095e.pdf
ՊԳԿ/ԱՅԿ ուղեցույցը վնասատուների և թունաքիմիկատների կառավարման քաղաքականության մշակման վերաբերյալ [2010թ.]	http://www.fao.org/fileadmin/templates/agphome/documents/Pests_Pesticides/Code/Policy_2010.pdf
ՊԳԿ/ԱՅԿ–ի ուղեցույցը թունաքիմիկատների գրանցման վերաբերյալ [2010թ.]	http://www.fao.org/fileadmin/templates/agphome/documents/Pests_Pesticides/Code/Registration_2010.pdf
ՊԳԿ–ի «Թունաքիմիկատների գրանցման վերաբերյալ գործիքակազմը»	http://www.fao.org/pesticide-registration-toolkit/tool
Թունաքիմիկատները կարգավորող ծրագրի համապատասխանության և կիրարկման վերաբերյալ ուղեցույց [2006թ.]	http://www.fao.org/fileadmin/templates/agphome/documents/Pests_Pesticides/Code/Compliance.pdf
ԱՅԿ/ՊԳԿ ուղեցույցը թունաքիմիկատների ազդեցության հետևանքով առաջացած առողջապահական և բնապահպանական դեպքերի մասին հաշվետվական համակարգի մշակման վերաբերյալ [2009թ.]	http://www.fao.org/fileadmin/templates/agphome/documents/Pests_Pesticides/Code/Incidentreporting09.pdf
ՏՅԶԿ–ի ուղեցուցային փաստաթուղթը քիմիկատների հետ կապված ռիսկերի կառավարման ոլորտում սկերի վերաբերյալ տեղեկատվության հաղորդման մասին [2002թ.]	http://www.oecd.org/officialdocuments/publicdisplaydocumentpdf/?cote=env/jm/mono%282002%2918&doclanguage=en
Քիմիական նյութերի դասակարգման և պիտակավորման գրքալ ներդաշնակեցման համակարգ [2015թ.]	http://www.unece.org/fileadmin/DAM/trans/danger/publi/ghs/ghs_rev06/English/03e_part3.pdf
Ստոկհոլմի կոնվենցիա	http://chm.pops.int/
Ռոտերդամի կոնվենցիա	http://www.pic.int/
Մոնրեալի կոնվենցիա	http://ozone.unep.org/en/handbook-montreal-protocol-substances-deplete-ozone-layer/44
ԶՆԵԳ–ի «Դասակարգման և պիտակավորման ռեեստրը»	https://echa.europa.eu/information-on-chemicals/cl-inventory-database
ԵՄ միասնական գրանցման համակարգը	http://ec.europa.eu/food/plant/pesticides/eu-pesticides-database/public/?event=activesubstance.selection&language=EN
ԶՆԵԳ–ի քիմիական նյութերի ռիսկերի և անվտանգ օգտագործման վերաբերյալ տեղեկատվության հաղորդման մասին ուղեցույցը [2010թ.]	https://echa.europa.eu/documents/10162/13639/risk_communications_en.pdf
ԶՅՄԳ –ի «Մարդկանց համար քաղցկեղային ռիսկերի գնահատման մենագրությունները»	http://monographs.iarc.fr/ENG/Classification/index.php
ԱՄՆ ՇՄՊԳ–ի Թունաքիմիկատների մասին տեղեկատվության ազգային կենտրոն	http://npic.orst.edu/chemicals_evaluated.pdf
ՄԱՇՄՏ, «Քիմիական նյութերի արդյունավետ կառավարման հարցում անգործության գինը» [2013թ.]	http://www.unep.org/chemicalsandwaste/Portals/9/Mainstreaming/CostOfInaction/Report_Cost_of_Inaction_Feb2013.pdf

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԱՎԹ-ՆԵՐԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Չափանիշ 1. Սուր թունոնակություն

Հիմնական աղբյուրը ԱՀԿ-ի «Թունաքիմիկատների առաջարկվող դասակարգումն ըստ վտանգավորության աստիճանի» (http://www.who.int/ipcs/publications/pesticides_hazard/en/) փաստաթուղթն է:

Կարևոր է նշել, որ վտանգավորության դասակարգումը պետք է վերաբերի արտադրանքի պատրաստուկային ձևին: Պատրաստուկային ձևի դասակարգումը կարող է գնահատվել, եթե այն չի տրամադրվում արտադրողի կողմից: Վերոնշյալ փաստաթղթում ներառված հիմնական աղյուսակներն ապահովում են ազդող նյութերի համար վտանգավորության դասակարգումը, որը պետք է ճշգրտվի՝ հաշվի առնելով համապատասխան արտադրանքի պատրաստուկային ձևի փաստացի խտությունը: Հավելվածում ներկայացված փոխակերպման աղյուսակները կարող են օգտագործվել՝ համապատասխան արտադրանքի պատրաստուկային ձևի փաստացի վտանգավորության դասակարգումը սահմանելու համար:

Չափանիշ 2/4. Քրոնիկական թունոնակություն

Հիմնական աղբյուրը «Քիմիական նյութերի դասակարգման և պիտակավորման գլոբալ ներդաշնակեցման համակարգ»

(http://www.unece.org/trans/danger/publi/ghs/ghs_rev06/06files_e.html) փաստաթուղթն է (ԳՆՀ):

Ստորև բերված աղյուսակում ներկայացվում է համապատասխան ԳՆՀ դասակարգումների նկարագիրը:

	Դասը	Նկարագիրը	Վտանգավորության բնութագիրը
Պոթենցիոնալ ծայրահեղություն	I	Մարդու համար հայտնի կամ ենթադրյալ քաղցկեղածին	Կարող է առաջացնել քաղցկեղ
	II	Հայտնի է որպես մարդու համար քաղցկեղածին հատկությամբ օժտված: Նյութի դասակարգումը հիմնված է մարդկանց հիվանդացության տվյալների վրա:	
	III	Ենթադրվում է, որ մարդու համար ունի քաղցկեղածին հատկություն: Նյութի դասակարգումը հիմնված է կենդանիների հիվանդացության տվյալների վրա:	
Մոլեկուլային ծայրահեղություն	I	Նյութեր, որոնք հայտնի են որպես ժառանգական մուտացիաներ առաջացնող կամ դիտարկվում են որպես մարդու սաղմային բջիջներում ժառանգական մուտացիաներ առաջացնող:	Կարող է առաջացնել բնածին արատներ
	II	Նյութեր, որոնք հայտնի են որպես մարդու սաղմային ժառանգական մուտացիաներ առաջացնող:	
	III	Նյութեր, որոնք պետք է դիտարկվեն որպես մարդու սաղմային բջիջներում ժառանգական մուտացիաներ առաջացնող:	
Քրոնիկական ծայրահեղություն	I	Թունոնակ նյութեր, որոնք հայտնի է կամ ենթադրվում է, որ բացասական ազդեցություն են ունենում մարդու վերարտադրողական համակարգի վրա:	Կարող է վնասել պտղաբերությանը կամ չնվաճել երեխային:
	II	Թունոնակ նյութեր, որոնք հայտնի է, որ բացասական ազդեցություն են ունենում մարդու վերարտադրողական համակարգի վրա:	
	III	Թունոնակ նյութեր, որոնք ենթադրվում է, որ բացասական ազդեցություն են ունենում մարդու վերարտադրողական համակարգի վրա:	

Ի տարբերություն ԱՀԿ-ի վտանգավորության դասակարգման, ԳՆՀ-ն չի տրամադրում թունաքիմիկատների ցանկերը և դրանց դասակարգումը: Այս տեղեկատվությունը պետք է փնտրել այլ վայրում: Ստորև ներկայացված աղյուսակում նշվում են հիմնական տեղեկատվական աղբյուրներից մի քանիսը:

	Քաղցկեղածնություն	Մուտագենություն	Թունաբանական կրիտիկականության համակարգի կիրառումը	Ապահովում Է ԳՆՀ ընդհանրացումը
Քիմիական անվտանգության միջազգային քարտեր (ԱՀԿ/ԱՄԿ)	x	x	x	անուղղակի
Եվրոպական Միության թունաքիմիկատների տվյալների շտեմարան	x	x	x	x
Քիմիական նյութերի եվրոպական գործակալություն (ԵՆՄԳ). Դասակարգման և պիտակավորման ռեեստր	x	x	x	x
ՏՀԶԿ –ի «e-Chem» պորտալ	x	x	x	x
ԵՅՄԳ –ի «Մարդկանց համար քաղցկեղածին ռիսկերի գնահատման մենագրություններ» (ԱՀԿ)	x			
ԱՄՆ ՇՄՊԳ–ի Թունաքիմիկատների մասին տեղեկատվության ազգային կենտրոն	x			

Քիմիական անվտանգության միջազգային քարտերը (ԵՄՄԵ) հասանելի են առցանց տվյալների շտեմարանից, որը վարում են ԱՀԿ-ն և ԱՄԿ-ն: Տվյալների շտեմարանը նպատակ ունի ապահովել ԳՆՀ դասակարգումը բոլոր թունաքիմիկատների համար, սակայն դա դեռևս բացակայում է հին թունաքիմիկատների համար, որոնք դեռ չեն վերագնահատվել: ԵՄՄԵ–ի տվյալների շտեմարանը չի տրամադրում ԳՆՀ-ի քաղցկեղածնության կատեգորիան 1Ա և 1 Բ դասերի համար, այն ավելի շուտ ապահովում է այդ դասերի վտանգավորության նկարագրերը (տե՛ս վերը բերված աղյուսակը):

Եվրոպական Միության թունաքիմիկատների տվյալների շտեմարանները տեղեկատվություն են տրամադրում բույսերի պաշտպանության միջոցների մասին, որոնք վերանայվել են ԵՄ գրանցման միասնական համակարգի (<http://ec.europa.eu/food/plant/pesticides/eu-pesticides-database/public/?event=activesubstance.selection&language=EN>) միջոցով: Սա ներառում է տեղեկատվություն ԳՆՀ դասակարգման մասին: Տվյալների շտեմարանը չի պարունակում տեղեկատվություն չվերանայված կամ չգրանցված թունաքիմիկատների մասին: Այդ տեղեկությունները կարելի է գտնել ԵՄՄԳ–ում (տե՛ս ստորև), որը նաև ապահովում է բիոցիդների դասակարգումը (այսինքն՝ ոչ բույսերի պաշտպանության միջոցները):

Քիմիական կայունության գործակալության (ՔՆԵԳ) «Դասակարգման և պիտակավորման ռեգիստր»-ն ապահովում է քիմիական կայունության, ներառյալ թունաքիմիկատների վտանգի դասակարգումը, որոնք վերանայվել են ԵՄ-ում (նույնիսկ եթե դրանք թույլատրված չեն): ՔՆԵԳ-ի «Դասակարգման և պիտակավորման ռեգիստր»-ը (<https://echa.europa.eu/information-on-chemicals/cl-inventory-database>) հետևողականորեն հետևում է ԳՆՅ-ին: ՊԳԿ-ի «Թունաքիմիկատների գրանցման գործիքակազմ»-ը (հավելված II) (<http://www.fao.org/pesticide-registration-toolkit/tool>) բացատրում է, թե ինչպես կարելի է տեղեկատվություն գտնել ՔՆԵԳ-ի «Դասակարգման և պիտակավորման ռեգիստր»-ում:

ՏՀԶԿ-ի «e-Chem պորտալ»-ը կարող է օգտագործվել վերոհիշյալ աղբյուրներից շատերի համար և վերջին ժամանակներս նախաձեռնել է ԳՆՅ դասակարգումների համար հատուկ որոնման մեթոդ (<http://www.echemportal.org/echemportal/page.action?pageID=134>) տվյալների շտեմարաններում: Հետևյալ աղբյուրները տրամադրում են տեղեկատվություն քաղցկեղածնության մասին, սակայն չեն օգտվում ԳՆՅ դասակարգումից:

ՔՅՄԳ-ի մենագրություններ. Մարդկանց համար քաղցկեղածին ռիսկերի գնահատման վերաբերյալ այս մենագրությունները պատրաստել է Քաղցկեղի հետազոտման միջազգային գործակալությունը (ՔՅՄԳ), որը ԱՅԿ-ի մաս է կազմում:

ԱՄՆ/ՇՄՊԳ-ի «Ռիսկի մասին տեղեկատվական միասնական համակարգ»-ը նույնպես տեղեկացնում է թունաքիմիկատների քաղցկեղածնության մասին, սակայն օգտագործման առումով այն ավելի դժվար է, քանի որ այն տարբեր դասակարգումներ և չափանիշներ է սահմանել վերանայման տարբեր ժամանակաշրջանների համար: Այն չի օգտագործում ԳՆՅ դասակարգումը: Քաղցկեղածնության գնահատման արդյունքները հրապարակվում են այն քիմիական կայունության ցանկում, որոնք գնահատվում են որպես քաղցկեղածին հատկությամբ օժտված: Այս ցանկը հասանելի է թունաքիմիկատների մասին ազգային տեղեկատվական կենտրոնի կայքում (http://npic.orst.edu/chemicals_evaluated.pdf):

Չափանիշ 5. Ստոկհոլմի կոնվենցիա

Հավելված Ա-ում և հավելված Բ-ում

(<http://chm.pops.int/TheConvention/ThePOPs/ListingofPOPs/tabid/2509/Default.aspx>)

Թվարկված թունաքիմիկատներ: Չափանիշներն առ այն, թե որոնք են համարվում ԿՕԱ-ներ, թվարկված են հավելված Դ-ում

(<http://chm.pops.int/TheConvention/Overview/TextoftheConvention/tabid/2232/Default.aspx>):

Չափանիշ 6. Ռոտերդամի կոնվենցիայում ընդգրկված թունաքիմիկատները թվարկված են հավելված III-ում

(<http://www.pic.int/TheConvention/Chemicals/AnnexIIIChemicals/tabid/1132/language/en-US/Default.aspx>):

Չափանիշ 7. Մոնրեալի արձանագրությունում ընդգրկված թունաքիմիկատները թվարկված են Մոնրեալի արձանագրության

(<http://ozone.unep.org/en/handbook-montreal-protocol-substances-deplete-ozone-layer/44>)

ներքո: Մինչ այս ուղեցույցի հրապարակման ժամանակը, միակ թվարկված թունաքիմիկատը եղել է մեթիլ բրոմիդը:

Չափանիշ 8. Ծանր կամ անշրջելի բացասական հետևանքների բարձր ցուցանիշներ

Այն, թե արդյո՞ք տվյալ արտադրանքը համապատասխանում է այս չափանիշին, որոշվում է ազգային օրենսդիր մարմնի հայեցողությամբ, և տարբերվում է ըստ երկրի՝ կախված օգտագործման հանգամանքներից և վստահելի տվյալների առկայությունից:

ՀԱՎԵԼՎԱԾ II. ՊԳԿ-Ի «ԹՈՒՆԱՔԻՄԻԿԱՏՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄ-Ը

ՊԳԿ-ի «Թունաքիմիկատների գրանցման գործիքակազմ»-ը եկամուտների ցածր և միջին մակարդակներ ունեցող երկրներում թունաքիմիկատները գրանցողների համար որոշումների կայացմանն օժանդակող համակարգ է: Այն աջակցում է գրանցողներին թունաքիմիկատների թույլտվության գնահատման և գրանցված թունաքիմիկատների վերանայման ժամանակ: Գործիքակազմը կարող է համարվել որպես համացանցի միջոցով թունաքիմիկատները գրանցողների կողմից ամենօրյա օգտագործման համար նախատեսված լավագույն ձեռնարկ: Այն աջակցում և ոյուրացնում է գրանցողների կողմից տեղեկացված որոշումների կայացմանը, սակայն այն ավտոմատացված համակարգ չէ, որը գրանցողներին առաջարկում է որոշումներ: Գրանցողները կարող են օգտագործել գործիքակազմն իրենց հերթական որոշ առաջադրանքների կատարմանն օժանդակելու համար: Ինչ վերաբերում է առավել վտանգավոր թունաքիմիկատներին, գործիքակազմը կարող է օգտագործվել որպես օժանդակություն՝ այս ուղեցույցում նկարագրված երեք քայլերի (Նույնականացում, գնահատում և մեղմում) իրականացման համար: Գործիքակազմն, օրինակի համար, ապահովում է մեթոդներ և ռեսուրսներ՝

- **իրականացնելու համար ռիսկի գնահատում** թե՛ մարդու առողջության և թե՛ շրջակա միջավայրի վրա ազդեցությունների առումով՝ օգտագործելով հեղինակավոր գրանցման մարմինների տրամադրած լայն ճանաչում գտած մեթոդները կամ առկա գնահատականները [տե՛ս ստորև Էկրանի վրա պատկերված նկարում՝ ճախ սյունակում «Գնահատման մեթոդներ»] գործիքը]: Այն ապահովում է գնահատման մեթոդներ բարդության տարբեր մակարդակներում սահմանափակ ռեսուրսներ պահանջող ընդհանուր մեթոդներից մինչև ռիսկերի գնահատման առավել տեղային մեթոդները,
- **թունաքիմիկատի վերաբերյալ առանձնահատուկ տեղեկատվության որոնման համար**, օրինակ, այլ երկրներում թունաքիմիկատների գրանցման կարգի, գիտական ակնարկների, վտանգավորության դասակարգման և թունաքիմիկատների հատկությունների վերաբերյալ [տե՛ս «Տեղեկատվության աղբյուրները» ստորև Էկրանի նկարում],
- **ռիսկի մեղմման տարբերակների վերաբերյալ որոշում կայացնելու համար**, ներառյալ գործնական ուղեցույցն այն մասին, թե ինչպես պետք է հաշվի առնել տեղական պայմանները (տե՛ս ստորև գործիքակազմի վերաբերյալ սյունակը):

ՊԳԿ-ի «Թունաքիմիկատների գրանցման գործիքակազմ»-ին կարելի է ծանոթանալ՝ այցելելով հետևյալ կայքէջը՝ <http://www.fao.org/pesticide-registration-toolkit/tool>:

